

Կ. Սկրտումյան և Ն. Ս. Սկրտումյան

Էլ. ՓՈՍ` [narinemkrtumyan@rambler.ru](mailto:narinemkrtumyan@rambler.ru)

## ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ



### IV թողարկում

ԽՄՔԱ ԳԻՐ ԵՎ ՍՐՔԱ ԳՐԻՉ՝

ՆԱՐԻՆԵ ՍԿՐՏՈՒՄՅԱՆ

ՄՈՒՏՔԱ ԳՐՈՂ ԵՎ ՀԱՍԱԿԱՐ ԳՉԱՅԻՆ

ԶԵՎԱՎՈՐՈՂ՝

ԿԱՐԻՆԵ ՍԿՐՏՈՒՄՅԱՆ

Նյութերը հավաքեցին և քարզմանեցին  
Կ. Ս. Սկրտումյանը և Ն. Ս. Սկրտումյանը



## ԲՆՈՒԹՅԱՆ ԴԵՂԱՏՈՒՆ



ԵՐԵՎԱՆ  
ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ  
2010

# ՄԱՏԵՆԱՇԱՐԻ ԱՅՍ ԹՈՂԱՐԿՄԱՆ ՄԵԶ ՏԵՂ ԵՆ ԳՏԵԼ

❖ Ինչո՞ւ է ցավում գլուխը .....	5
❖ Անքնորթյուն .....	7
❖ Սեռական անկարողություն .....	12
❖ Կազանովայի գաղտնիքները .....	15
❖ Կանացի հիվանդություններ .....	17
❖ Ընկնավորություն .....	20
❖ Պատաճեկան բշտիկներ .....	21
❖ Հրաշագործ լոշտակը .....	24
❖ Արտաստվոր այրութեն .....	25
❖ Աղեստանոքսային ուղու հիվանդություններ .....	29
❖ Ստամոքսի հիվանդություններ .....	31
❖ Ալկոհոլի վնասները .....	36
❖ Ալկոհոլի մանոկ զոհերը .....	39
❖ Դոդեռոցք (տենդ) .....	40
❖ Թոքերի հիվանդություններ .....	41
❖ Աչքերի հիվանդություններ .....	44
❖ Մրսածություն .....	49
❖ Գարնանային կատառ .....	51
❖ Ալերգիա .....	52
❖ Բույրերն առողջություն են պարզեցում .....	53
❖ Ծարպակալում .....	55
❖ Թզի բուժիչ հատկությունները .....	62
❖ Ծիրանի բուժիչ հատկությունները .....	63

## ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Մարդն իր ոչ ճիշտ ապրելակերպի պատճառով, երբեմն էլ իր կամքից անկախ (ժառանգաբար) ձեռք է բերում հիվանդություններ: Սայր բնությունը, զբահրտ գտնվելով, դրանց բուժման համար տվել է բազում դարմաններ, որոնց մասին իմանալն ու առողջ ապրելն անհրաժեշտություն է յուրաքանչյուրին համար:

Այս մատենաշարում բնդգրկված են հայկական, ռուսական, չինական, տիբեթական, սերբական, վրացական և շատ այլ բժշկարանների կողմից առաջարկվող լավագույն դեղատոմսերը: Ներկայացված են նաև առօրյա կյանքում առավել հաճախ հանդիպող իրավիճակների, անցանկալի պատահարների ժամանակ կիրառվող մի շարք միջոցներ, որոնց շնորհիվ կարող եք օգնել ոչ միայն ձեզ, այլև օգնության կարիք զգացող մարդկանց:

Թեև առաջարկվող բուժամիջոցները հասանելի են ամենաքին և արդյունավետ, այնուամենայնիվ դրանք օգտագործելուց առաջ ցանկալի է խորհրդակցել բժշկի հետ, քանի որ ամեն մի օրգանիզմ ունի իր առանձնահատկությունները: Կիրառեք տրված դեղատոմսերն ի շահ ձեր առողջության և այս գիտելիքներով օգտակար եղեք ամենքիմ:

## ԻՆՉՈ՞Ւ Է ՑԱՎՈՒՄ ԳԼՈՒԽԸ

Կա այսպիսի ասացվածք. «Գլուխն ատամ չէ, որ ցավի, հանես, դեն գցես»: Եթե ձեր գլուխը երբեք չի «պայթել» ցավից, ապա դուք ոչ միայն երջանիկ մարդ եք, այևս՝ թանգարանային հազվագյուտ նմուշ: Համաձայն վիճակագրական տվյալների, կանանց 78, իսկ տղանարդկանց 64 %-ն ամիսը գոնե մեկ անգամ սուր գլխացավ է ունենում: Գլխացավի ամենատարածված տեսակն առաջանում է լարվածությունից, և մարդը «դուրս է մնում» կյանքի ռիթմից: Նման գլխացավը տարածված է նաև երեխաների մոտ, և այն շատ հաճախ առաջանում է հոգնածությունից, ցնցումներից, նույն դիրքով երկար նստելուց:

Սովորաբար այդ տիհած զգացողությունն անսպասելիորեն ի հայտ է գալիս օրվա երկրորդ կեսին: Մարդուն թվում է, թե իր գլուխը կապում են ձիգ վիրակապով: Նմանատիպ գլխացավերից ազատվելու համար բավարար է անցնել մերսումների մի քանի կուրս և սովորել լիցքաթափվել: Սուր գլխացավեր նկատվում են մի քանի տասնյակ հիվանդությունների ու հիվանդագին վիճակների ժամանակ:

Գլխացավի ստույգ պատճառները պարզելու համար անհրաժեշտ են համապատասխան բժշկական գիտելիքներ, իսկ շատ դեպքերում էլ՝ լարորատոր հետազոտություններ: Հազվադեպ գլխացավի և ծայրահեղ անհրաժեշտության դեպքում կարելի է օգտվել ցավազրկող միջոցներից՝ չմոռանալով, որ դրանք «այրում» են ստամոքսի լորձաթաղանթը և ունեն մի շարք անցանկալի այլ ազդեցություններ: Գլխացավի ժամանակ հարկավոր է չափել ճնշումը և որոշել այն դիրքը (պառկած, նստած), որն օգնում է մեղմել ցավը: Եթե ցավն ուղեկցվում է ջերմության բարձրացումով, ակնախնձորների ցավով, պարանոցի ետին մկանների բռնվածությամբ, տեսողության խախտումով, գլխապտույտով, սրտխառնոցով, պետք է անհապաղ դիմել բժշկի:

## ԳԼԽԱԳԱՎԻ ԴԵՎՔՈՒՄ ԽՈՐՀՈՒՐԴ Է ՄԻՐՎՈՒՄ՝

❖Կարտոֆիլը լվանալ, առանց կեղևելու 1 սմ հաստությամբ կտրատել և դնել ցավող տեղին: Եթե հյութը չորանա, կարտոֆիլի շերտը շրջել:

❖Քննելուց առաջ խմել 1 ճ/գ շաքարաջուր:

❖Օգտակար են գնարբուկը, լոշտակը, ծորենին, եղերդակը, ծիծեռնախոտը, խնկածաղիկը, խօնդատը, իշառվույտը, գայլուկը, արյունխմիկը:

❖Շնակատին ու քունքերին քսել սխտորի հյութ:

❖Կիտրոնի կեղևը ներսի կողմից դնել քունքերին: Մաշկը քոր կգա, կլարմրի, և գլխացավը կանցնի:

❖1 ճ/գ ուղցի չորացրած տերևների վրա լցնել 250 գ եռացրած ջուր, 5 րոպե եփել, սառեցնել, քամել և խմել օրը 3-4 անգամ:

❖Օգտակար է անանուխով պատրաստված կանաչ կամ սև թեյը:

❖Հոնի պտուղների խյուսը քսել կտորին և կապել ճակատին:

❖Գինու հետ խառնած գարու այլուրը քսել ձեռքերին:

❖Շնակատին կաղամբի թարմ տերև կապել, իսկ ոտքերը դնել տաք ջրի մեջ:

❖1 բաժակ կաղամբի հյութին խառնել 1 ճ/գ մեղր: Գլխացավի ժամանակ ընդունել օրը երեք անգամ՝ անոթի վիճակում:

❖Օգտակար են հունական ընկույզը, չամիչը, պանիրը:

❖Ուեհանը բուժում է անոթային ծագում ունեցող գլխացավը, իսկ նրա բույրն օգտակար է միզրենի դեպքում:

❖Խմել հազարի հյութ:

❖Բուսական յուղը 15-20 րոպե բերանում պահել, լեզվով շարունակ խառնելով, ապա թափել, բերանը ողողել: Ձեթը կուլ տալ չի կարելի, քանի որ նրա մեջ են անցնում թույներն ու մանրէները:

❖Մերսել ականջաբլթակի վերևի կոճիկային մասը:

❖Թեթևակի մերսել քունքերի խոռոչները, ցավը կանցնի:

❖Քթարմատը շրջանաձև շարժումներով մերսել:

## ԱՆՁՆՈՒԹՅՈՒՆ



Քունը կենսաբանական անհրաժեշտություն է: Խորը քունը գեղեցկացնում է, երիտասարդացնում, բարձրացնում է տրամադրությունը, լավացնում արյան շրջանառությունը: Ցավոք, այսօր մարդկանց մի ստվար զանգված տառապում է անքնությամբ՝ կապված նյարդային համակարգի, նյութափոխանակության կամ այլ հիվանդությունների հետ: Այն հաղթահարելու հիմնական դժվարությունը հոգեբանական տրամադրվածությունն է, այսինքն՝ երբ անկախ իր կամքից մարդոն սպասում է դրան՝ կանխագուշակելով գիշերային տանջանքը:

Կարիք չկա պարտադրել ձեր օրգանիզմին, ընդհակառակը, որոշեք չքնել և զբաղվեք որևէ հետաքրքիր գործով: Ընթերցեք գրքեր (բայց ոչ՝ քրեական խրոնիկա), ամսագրեր: Մտովին սպիտակ կտավի վրա ծաղիկներ մկարեք, առանց շտապելու ներկեք դրանք, չմոռանաք թուլացնել մկանները, նտարերեք կամ պատկերացրեք որևէ հաճելի իրադարձություն: Օրվա ընթացքում սահմանափակեք թեյի, սուրճի գործածությունը. դրանք գրգիշ ազդեցություն են ունենում գլխուղեղի և արյան շրջանառության վրա: Երեկոյան չափից շատ ուտելը, ծխելը, խմելը (հատկապես՝ ալկոհոլային խմիչքներ) կարող են անքնության պատճառ հանդիսանալ:

Անքնությամբ տառապողները, հաճախ առանց բժշկի հետ խորհրդակցելու, փորձում են իրենց «բուժել» զանազան քնարեք դեղամիջոցներով: Նրանք հայթարում են այդ հաբերն ու ընդունում իրենց իսկ սահմանած դեղաչափով: Սա շատ սխալ և վտանգավոր ինքնարություն է, որը կարող է հանգեցնել անցանկալի հետևանքների: Բժիշկներն այդ հաբերը նշանակում են կարծ

ժամանակով և, երբ արդյունքի են հասնում, բուժումը շարունակում են այլ անվնաս միջոցներով:

Ժամանակի ընթացքում քնարերների սովորական չափաբաժինների ներգործությունը բուլանում է, և մարդու սկսում է դրանք աստիճանաբար ավելացնել: Առաջանում է հիվանդագին հակվածություն քնարերների նկատմամբ, իսկ դա ոչ այլ ինչ է, եթե ոչ՝ թմրամոլության մի ձև: Դեղերի փոխարեն ավելի լավ է օգտագործել հանգստացնող և քնարեր հատկություններ ունեցող մթերքներ, ինչպիսիք են՝ սիսեռը, լորին, դդումը, կաղամբը, մածունը, եգիպտացորենը, սամիթը, կիտրոնը, մեղրը, պանիրը:

Բրիտանացի հետազոտողները հանգել են այն եզրակացության, որ գիշերը կերած մի կտոր պանիրը դրական ազդեցություն է ունենում քնի որակի վրա: Գիտնականներն անցկացրել են մի գիտափորձ, որին մասնակցել են 200 կամավորներ: Վերջիններս 1 շաբաթվա ընթացքում քնելուց կես ժամ առաջ կերել են 20 գ պանիր: Գիտափորձի մասնակիցների 72 %-ը նշել է, որ ավելի լավ է քնել, 2/3-ը հիշել է տեսած երազները, թեև նախկինում դա նրանց ընդհանրապես չէր հաջողվում: Պարզվել է նաև, որ մասնակիցներին չեն տանջել գիշերային մղձավանջները:

Եթե ուզում եք վերականգնել կանոնավոր ու առողջ քունը, սովորեք պառկել և արթնանալ միևնույն ժամին, այլապես խախտվում է կենսաբանական ռիթմը, ինչի հետևանքով անքնություն է զարգանում: Ամենից ճիշտը վաղ քնելն ու վաղ արթնանալն է: Իսկ եթե տառապում եք անքնությամբ, ցերեկային քունը խստիվ արգելվում է: Հնարավորինս խուսափեք բախումներից, վեճերից, միապաղադ մտավոր աշխատանքից: Դրանք գերլարվածություն են առաջացնում: Մտավոր լարված աշխատանքով զբաղվեք միայն գիշերային կանոնավոր քնից հետո:

Քնելուց առաջ ցանկալի է զբոսնել մաքուր օդում, օդափոխել սենյակը: Ննջասենյակը, որքան հնարավոր է, մութ պետք է լինի, հակառակ պարագայում օգտվեք աչքերին դրվող թերև ժապավենից: Եթե շրջապատող աղմուկը ձեզ թույլ չի տալիս քնել, ականջների մեջ մի փոքր բամբակ դրեք: Սարմինն ազատ շնչելու համար քնեք գիշերային թերև հագուստով, որի մեջ ձեզ պետք

## **-9- ԺՈՂՈՎՐԴԱԿԱՅՆ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ**

է զգաք բացարձակապես ազատ: Քնեք ցածր բարձի վրա՝ պարանոցի կոմիտեից ու կոմիտեական դաշտի համար:

Մի՛ մոռացեք, որ մարմինը մագնիսական դաշտ է, և այն քնած ժամանակ պետք է ուղղված լինի Երկրի մագնիսական դաշտի ուղղությամբ՝ գլուխը՝ դեպի հյուսիս, իսկ ոտքերը՝ դեպի հարավ:

Չեզոնից հեռու վանեցեք սևեռուն ու չարաբաստիկ մտքերը: «Պետք չէ քնի որսորդություն անել, հենց որ այն փորձես քնել, անմիջապես կրօչի-կհեռանա թռչնից էլ արագ», - խորհուրդ է տալիս նյարդային հիվանդությունների ականավոր պրոֆեսոր Պ. Դյուրուան:

### **ԺՈՂՈՎՐԴԱԿԱՅՆ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՔՆՈՒԹՅԱՆ ԴԵպքում առաջարկում է՝**

❖ Առավոտյան և երեկոյան՝ քնելուց առաջ, խմել ալոճենու ծաղիկներից կամ պտուղներից պատրաստված թեյ:

❖ Քնելուց առաջ ընպել անանուխի թեյ:

❖ 10 գ առյուծագիի չորացրած ու մանրած տերևները և ծաղիկները 10 րոպե եռացնել 1 բաժակ ջրուն, քամել, քնելուց առաջ խմել:

❖ 2 թ/գ գայլուկի կոները 1 բաժակ եռացրած ջրում 4 ժամ թրմել և քնելուց առաջ խմել 2-4 ճ/գ:

❖ 2 թ/գ իշառվույտի չորացրած տերևներն ու ծաղիկները 2-3 ժամ թրմել 2 բաժակ եռացրած ջրում: Ստացված թուրմից քնելուց առաջ խմել 2-3 ճ/գ:

❖ Քնելուց առաջ ընպել 1 բաժակ տաք կաթ:

❖ 20 գ կատվախոտի չորացրած արմատները կես ժամ թրմել 200 մլ եռացրած ջրուն, սառեցնել, քամել և քնելուց առաջ ընդունել 2-4 ճ/գ:

❖ Քնելուց 1-2 ժամ առաջ խմել 1 ճ/գ մեղրով ու 1 թեյի բաժակ տաք ջրով պատրաստված օշարակ:

❖ Քնելուց առաջ խմել 1 բաժակ ոչ շատ թունդ ալկոհոլային խմիչք՝ գինի, գարեջուր:

❖ Յեթիմները հավաստիացնում են, որ երեկոյան 3-4 րոպե տևողությամբ նստած վիճակում սառը ջրով լոգանք ընդունելը նպաստում է հանգիստ քնին:

❖ Շատ օգտակար է քնից առաջ լոգանք ընդունելը:

❖ Անքնության ու հոգնածության դեպքում ուտել 1 թ/գ մեղր:

❖ Երեկոյան ուտել 1 թ/գ քնչութ:

❖ Կովկասում ժողովրդական բժիշկները խորհուրդ են տալիս նախքան քնելը խմել 2 բաժակ այծի թարմ, չպաստերիզացված կաթ:

❖ Քնելուց առաջ սոխ ուտելը նպաստում է խորը և առողջարար քնին:

❖ Ծոնքրակին տղրուկներ դնել, իսկ քնելուց առաջ 5 րոպեով ոտքերը մինչև ծնկները դնել գոլ ջրի մեջ:

❖ Մանաճեխի սպեղանին կամ քերած ծովարողկը (ժախուկ) դնել սրունքներին: Միաժամանակ խմել թրու դրած վարունգի ջուր՝ 1 բաժակին խառնելով 1 ճ/գ մեղր:

❖ Քնելուց առաջ սահմանափակել ուտելիքի և մեծ քանակությամբ հեղուկների ընդունումը:

❖ Ուեհանի բույրը բարերար ազդեցություն է ունենում անքնության դեպքում:

❖ Հազարաթերթիկը լցնել կտորից կարված տոպրակի մեջ ու դնել բարձի մոտ:

❖ Եղեսպակի (առլֆեյ) բույրը բարերար ազդեցություն է ունենում անքնության դեպքում: Կիրառել վերը նշված ձևով:

❖ Խստիվ արգելվում է ցերեկային քունը:

❖ Երեկոյան հարկավոր է սահմանափակել կոֆեինը և ծխելը:

❖ Քնելուց առաջ ականջի ետնամասը երկու մատով շրջանաձև շարժումներով մերսել: Շատ օգտակար է, այն լիովին բուլացնում է օրգանիզմը:

❖ Անքնության ժամանակ խորհուրդ է տրվում բութ մատով և ցուցանատով մերսել ականջաբլթակները:

## ՀԵՏԱԶՐԾԻՐ Է ԻՄԱՆԱԼ



Մեր կյանքի մեկ երրորդը մենք անց ենք կացնում քնած, և դա ոչ թե ճոխություն է, այլ՝ օրինաչափ անհրաժեշտություն: Անքուն գիշերվանից հետո վատանում է և' մեր տեսքը, և' ինքնազգացողությունը: Ցավոք, մենք եղիսնի կամ Նապոլեոնի նման հանճարներ չենք: Նրանց լիովին բավարարում էր չորսմանյա գիշերային և ետքաշյա կարճատև քունը: Լավ ինքնազգացողություն ունենալու համար մենք պետք է քնենք, այսինքն՝ ուր ժամով «անջատվենք»:

Ամերիկացի գիտնականները որոշեցին պարզել, թե մարդու վրա ինչպես է ազդում երկարաւու (200-ժամյա) անքնությունը: Որպես «Ենթափորձային ճագար» հանդես եկավ ռադիոյի մի հաղորդավար: 135 ժամերի ընթացքում նա կանոնավոր ձևով վարում էր ռադիոհաղորդումները, և բոլոր հոգեբանական փորձարկումները լավ արդյունքներ տվեցին: Բժիշկները պարբերաբար ստուգում էին նրա արյունը, շնչառությունը, զարկերակը, մեզը: Դիետաբանները նշակել էին մի սննդակարգ, ըստ որի նա սնվում էր օրական 5 անգամ: Փորձարկվողը ժամանակ առ ժամանակ սառը ցնցուղ էր ընդունում և լողում լողավազանում: Դիմգերորդ օրվա վերջում, երբ քնի պահանջը սաստկացավ, նրան դոպինգ տվեցին: Վեցերորդ օրը նա վատացավ ու սկսեց կակազել, այնուհետև ի հայտ եկան հայուցինացիաներ: Իններորդ օրվա երեկոյան հալորդավարը սաստիկ գլխացավ ունեցավ, և քանի որ 200 ժամը լրացել էր, նրան թույլատրեցին քնել: Տասներեք ժամ մեռածի պես քնելուց հետո արթնացավ հրաշալի վիճակում, առանց շեղման որևէ նշանի: Այս գիտափորձից հետո գիտնականները եկան այն եզրակացության, որ բոլորովին էլ կարիք չկա վախենալ անքնությունից՝ կարծելով, թե մեզ սպառնում է դանդաղ թունավորում, իիվանդություն կամ մահ:

## ՍԵՌԱԿԱՆ ԱՆԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ

**✿**Գիտնականների կարծիքով սեռական անկարողությունն առաջանում է սննդի մեջ որոշ վիտամինների պակասից, իսկ բուժման համար խորհուրդ է տրվում հետևել սննդակարգին, ուտել հում բանջարեղեն, մրգեր, խմել հում բանջարեղենների հյութեր: Օրական անհրաժեշտ է քնել 6-9 ժամ, հաճախ շոգեբաղնիք գնալ և ընդունել արևային լոգանք:

**✿**Զինացինները սեռական անկարողությունը բուժում են արու մշկայծյամի մուշկով: Մուշկը, որը մուգ դարչնագույն է և ունի տիհած հոտ, գտնվում է հատուկ տոպրակում՝ կենդանու ետևի ոտքերի արանքում: Խորում են օրը 2-3 անգամ՝ 5-8 կարիլ ավելացնելով կես բաժակ ջրին: Մուշկը կիրառում են նաև գնդիկների ձևով՝ խառնելով փշրված չոր բույսերի հետ:

**✿**Զիթապտուղ ուտելը մեծացնում է սեռական կարողությունը, ամրապնդում անդամը:

**✿**Ըստ Ամիրդովլաթ Ամասիացու, պնդուկն ուժեղացնում է սեռական կարողությունը:

**✿**Ամիրդովլաթը նշում է, որ սխտորը մեծացնում է սեռական կարողությունը:

**✿**Ամիրդովլաթը գորում է, որ սպիտակ քաղցր խաղողն օգտակար է սեռական անկարողության դեպքում:

**✿**Պիստակն ուժեղացնում է սեռական հակումը:

**✿**Ժենշենի «ձեռքից» (արմատը հիշեցնում է մարդու մարմին՝ գլխով, իրանով, ձեռքերով, ոտքերով) կտրել 2-2,5 սմ երկարությամբ մի կտոր: Եթե արմատն էժանագին է, կարելի է ժենշենի ցանկացած մասից վերցնել 4 մ<sup>3</sup> չափի կտոր: Թրմել 3,5 լ լավ թորած օլիով կամ դեղատնային սպիրտով ( $40^{\circ}$  բնդության): Յաջորդ օրը թուրմը խմել: Ընդունել օրը երեք անգամ 1-ական գավաթ՝ ուտե-

## -13- ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ

լուց առաջ: Երբ շշի 1/20-ից պակաս թուրմ մնա, օդի ավելացնելու լավ թափահարել՝ խառնելով հին թուրմի մնացորդին: Շիշն այսպես կարելի է լցնել 2-3 անգամ: Երրորդ անգամից հետո հարկավոր է նոր թուրմ պատրաստել: Զի կարելի ուրիշի ժենշենի թուրմը խմել, իսկ եթե բուժումն ընդմիջվի, այն չի կարելի վերսկսել հին թուրմով: Զինական այս նշանավոր միջոցը ոչ միայն վերականգնում է սեռական կարողությունը, այլև երիտասարդացնում է ողջ օրգանիզմը:

❖ Վերցնել հավասար քանակությամբ հալվեի հյութ, կարագ, մեղր, սագի կամ խոզի ճարպ, մասուրի փոշի, իրար խառնել և տաքացնել (եռացնել չի կարելի): Լցնել տարայի մեջ, բերանը փակել, պահել զով տեղում: Ընդունել ուտելուց կես ժամ առաջ 1-ական ճ/գ՝ 1 բաժակ տաք կաթով կամ ջրով:

❖ 150 գ հալվեի հյութին ավելացնել 250 գ մեղր, 350 գ կարմիր գինի, 100 գ մասուրի ալյուր, 30 գ մաղաղանոսի սերմերի ալյուր: Թողնել 1-2 շաբաթ՝ պարբերաբար խառնելով: Ընդունել օրը երեք անգամ 1-ական ճ/գ՝ ուտելուց կես ժամ առաջ:

❖ Զվի դեղնուցին խառնել մի քիչ ալյուր, աղ, պղպեղ, եփել և ուտել:

❖ Սոխառածով ձվածեղն ուժեղացնում է սեռական կարողությունը:

❖ Սեռական անկարողության դեպքում շատ օգտակար են հետևյալ մթերքները՝ աղամաթուզը, սոխը, ճակնդեղը, հնդկածավարը, բրինձը, կարը, հինը, սեխը, մաղաղանոսը, սիսեռը, կիսաեփ ծուն, քնջութը, խավիծը:

❖ Գարին, կորեկը, կորեկածավարը նվազեցնում են սեռական կարողությունը:

❖ Ոսպը թուլացնում է սեռական կարողությունը, հետևաբար խորհուրդ չի տրվում հաճախ ուտել:

❖ Անորի վիճակում ոլորի եփուկ խմելն ուժեղացնում է սեռական գրգռվածությունը:

❖ Ցորենի թեփը ոլորի հետ (1:1) եփել այնքան, մինչև թանձրանա: 1 ամիս շարունակ ամեն օր ուտել:

❖ Ծլեցրած ցորենն աղալ, առանց աղի և համեմունքների կոտլետներ պատրաստել, ձիթապտղի յուղով տապակել ու մեղրով ուտել: Այն բարձրացնում է ներունակությունը: Ցորենը ծլեցնելու համար ապակյա տարայի մեջ կիսով չափ լցնել ցորեն, լավ լվանալ, ավելացնել այնքան սառը ջուր, որ ցորենից 1-2 մատ բարձր լինի, կափարիչով ծածկել և թողնել 12 ժամ: Ապա լվանալ, ջրամել և 12 ժամ թողնել՝ առանց կափարիչով ծածկելու: Այնուհետև բերանը ծածկել ու պահել սառնարանում: 1-2 օրից այն կծլի:

❖ Վայրի բողկն ուժեղացնում է սեռական կարողությունը:

❖ Բողկի տերկի ջուրն ավելացնում է սերմը, ուժեղացնում և ամրացնում է սեռական անդամը:

❖ Երիցուկի գլխիկները պոկել ու հյութն անմիջապես քամել: Քսելով ամորձիներին՝ կամրանա սեռական անդամը, կմեծանա սեռական ցանկությունը:

❖ Եղնիկի ամորձիները չորացնել, եփել, ուտել, իսկ վրայից գինի խնել: Այն ամրացնում է սեռական անդամը, մեծացնում ներունակությունը՝ պոտենցիան:

❖ Եղնիկին պոչով, մորթով, ուսկորներով ու մսով այրել, խառնել գինու հետ և քսել ամորձիներին, աճուկին, ճռներին: Այն ամրացնում է սեռական անդամը:

❖ Մկան ականջի՝ աննոռուկի հյութը քամել ու քսել սեռական անդամին: Այն ուժեղացնում է սեռական ցանկությունը: Կամ էլ չոր ցողունը եռացնել և դրանով օծել սեռական անդամը: Բժշկապետերը հավատացնում են, որ այս միջոցը նույնիսկ ծերերին է կտրիծ դարձնում, ուժեղացնում է սեռական ցանկությունը, ամրապնդում անդամը:

❖ Սեռական կարողությունը կուժեղանա, եթե ազարիոնի ծեծած արմատը մեջքին ամրացնեք:

❖ Ուղտի շրդանը կես մթխալ (սիսեռի չափ) խմել տաք ջուրով: Այն ուժեղացնում է սեռական կարողությունը, իսկ սեռապես ուժեղանալու համար սրանից գորավոր դեղ չկա:

❖ Վայրի գազարը թաթախել մեղրի մեջ և ուտել: Այն ուժեղացնում է սեռական ցանկությունը:

## ԿԱԶԱՆՈՎԱՅԻ ԳԱՂՏՆԻՔՆԵՐԸ



Գոյություն ունեն բացառիկ հատկություններ ունեցող մի շարք մթերքներ, համեմունքներ, որոնք ուժեղացնում են ներունակությունը՝ պոտենցիան: Այդ հնագույն դեղատոմսերից մեկի մասին հիշատակված է նաև Աստվածաշնչում: Խոսքը վերաբերում է մարդախոտի արմատներից պատրաստված սիրային ըմպելիքին: Քին Հունատանում բժիշկներն ամուսնացած զինվորներին ուժեղը վերականգնելու համար պատվիրում էին ուտել ձկնեղեն, ձկնկիթ, ութոտնուկ, ոստրե՝ այս ամենն առատորեն համեմելով կործապղպեղով (նմբիր), դարչինով, սոխով: Խոհարարական ամենահին գրքերից տեղեկանում ենք, որ ձուկը պարունակում է այնպիսի նյութեր, որոնք մեծացնում են սեռական կարողությունը: Նշված է նաև, որ գոյություն ունեն մի շարք խթանող համեմունքներ, ինչպիսիք են՝ դափնետերկը, դաղձը, մանանեխը, մաղաղանոսը, անխոնը, կապարի թուփը, սխտորը, զաֆրանը և այլն:

Քին ձեռագրերից մեկում խորհուրդ է տրվում քնելուց առաջ խմել տոնուսը բարձրացնող ըմպելիք՝ պատրաստված մեղրից, նշից ու խտալական եղևնուց:

Եկատերինա Մերիշին նախապատվությունը տալիս էր արտիհուկներին (բարդածաղկավորների ընտանիքին պատկանող բույս), որոնք 1578 թ. «Բուժիչ այգի» անվամբ հրատարակված գրքում հիշատակվում են որպես առանձնապես արդյունավետ խթանիչներ: Դեռևս 16-րդ դարում Ֆրանսիայում բանջարեղենի և կանաչու առևտորով գրադվորները գնորդներին հրավիրում էին իրենց վաճառասեղանների մոտ՝ գովերգելով արտիհուկները որ-

պես «տղամարդկանց ու կանանց հոգին և մարմինը ջերմացնող մթերք», իսկ սիրահարներին առաջարկում էին հինածաղիկ և պղպեղ:

Տրիստանի և Իզոլդայի սիրային ընպելիքը պատրաստված էր դաղձից, ծոթրինից, հազրեվարդից: Իսկ Կազմանովան իր զուգընկերուիհիներին չիհասթափեցնելու համար ուսում էր մորխեր:

Երբ իսպանացիները Եվրոպա բերեցին կարտոֆիլը և կակաոյի սերմը, այս մթերքներին Վերագրեցին հրաշագործ հատկություններ: Դրանք օրգանիզմի վրա գրգրիչ ազդեցություն էին ունենում, բարձրացնում էին ներունակությունը:

Տասնամյակներ շարունակ լոլիկը համարում էին «սիրո խնձոր»: Թեև իրատեսներն այն ժամանակ նրա հրաշագործ զորությունը Վերագրում էին հավատին և ներշնչանքին, այնուհանդերձ պալատական բժիշկները դուրս էին գրում «պոմիդորային դեղատոնմսեր»:

Ամերիկացի բժիշկ Իոլ Ուլուտսոնը եկավ այն եզրակացության, որ գոյություն չունի այնպիսի մթերք, որը կարելի է համարել լիարժեք սեռական խթանիչ: Միևնույն ժամանակ նա հաստատեց, որ բնության մեջ կան ներունակությունը բարձրացնող միջոցներ, որոնցից մեկն էլ իսպանական ճանճն՝ կանտարիդան: Այն մշակում են, փոշի դարձնում, ավելացնում սիրային ընպելիքներին: Դարձ է նշել, որ 0,03 գ կանտարիդայի փոշին կարող է սպանել մարդուն:

Բնական խթանիչ է նաև ժենշենը, որից թուրմեր են պատրաստում և ընպում: Սոխը, սխսորը, ծոթրինը, նեխուրը, հազրեվարդը ևս բնական խթանիչներ են:

Ֆրանսիացի հոմեոպաթներն առաջարկում են տղամարդու ներունակությունը բարձրացնող ընպելիք, որը պատրաստելու համար հարկավոր է 4 պտղունց մանրած ծոթորի, 2 պտղունց դաղձի և 1 պտղունց հազրեվարդի վրա լցնել 1 գավաթ եռացրած ջուր: Երբ խառնուրդ թրմվի, խմել: Ծոթորն ու դաղձը թոյնում են գրգռող ներգործություն, իսկ հազրեվարդն ավելացնում է ուժը: Այն անհրաժեշտ է ընդունել երեք ամիս շարունակ՝ քնելուց առաջ:

## ԿԱՆԱՑԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

❖ 1 գլուխ սխտորը քաղցր գինու մեջ եփել և ճաշի գդալով խմել: Օգտագործել դաշտանադադարի ժամանակ ու ցավոտ դաշտանի նախորդ օրերին:

❖ Ցավոտ դաշտանի դեպքում անհրաժեշտ է մաղաղանոսի հյութ խմել:

❖ Գնդածաղկի չոր արմատները մանրել և եփուկ պատրաստել (3-4 արմատին՝ 10 բաժակ եռացրած ջուր): Դաշտանային ցավերի ժամանակ ընդունել օրը երկու անգամ կեսական բաժակ: Սա չինաճապոնական միջոց է:

❖ Առատ ու ցավոտ դաշտանի դեպքում ռուս հեքիմները խորհուրդ են տալիս օգտագործել դաշտային ծիածետ: Դրա համար հարկավոր է 1 թ/զ ծիածետը եփել 2 բաժակ ջրում, ուժեղ ցավերի և առատ արյունահոսության ժամանակ ընդունել 2 ժամը մեկ 1-ական ճ/զ, իսկ ցավերը մեղմանալուց հետո՝ օրը երեք անգամ 1-ական ճ/զ:

❖ Ղանձլամերը կարգավորում է դաշտանային ցիկլը և մեղմում ցավերը:

❖ Առատ դաշտանի դեպքում խմել նարնջի կեղևից պատրաստված եփուկ:

❖ Դաշտանային խանգարումների ժամանակ ընպել ազնվամորու տերևների եփուկ:

❖ Յոնը և խորոված սոխուն օգնում են կանոնավորել անկանոն ձևով ընթացող դաշտանը:

❖ Ընկուզենու կեղևը որոշ ժամանակ պահել գինու մեջ ու խմել դադարած դաշտանի վերսկսման համար:

❖ Սամիթի արմատը, որը կիրառվում է խաշուկի ձևով, առատացնում է դաշտանը:

❖ Կաթսայի մեջ լցնել 1,5 բաժակ ջուր, լավ եռացնել, հետո

կրակը թուլացնել: Զրին ավելացնել 4 գ չորացրած սպանդ, 15 րոպե եփել՝ չթողնելով, որ եռա: Այնուհետև քամել և միանգամից խմել: Ցանկալի է այս հեղուկն ընդունել առավոտյան անորի վիճակում և 6 ժամ ոչինչ չուտել: Օգտակար է նվազ և անբավարար դաշտանի դեպքում:

❖ Արգանդի արյունահոսությունը կդադարի, եթե սեռական օրգանների վրա դնեք ձիթապտղի քամուկ:

❖ Երիցուկի ջրով լվացում կատարելն օգտակար է դաշտանի, արգանդի ուռուցքի ժամանակ:

❖ Արգանդի արյունահոսությունը կդադարի, եթե դեղին շուշանը մանր ծեծեք, խմեք կամ էլ մեղրով շաղախեք ու բրդով դնեք հեշտոցի մեջ:

❖ Արգանդի թուլության և արյունահոսության ժամանակ շատ օգտակար է ճնճղապաշարի եփուկը: 10 գ բույսի վրա լցնել 200 գ եռացրած ջուր, թրմել և խմել օրը երեք անգամ 1-ական ճ/գ:

❖ Խաղողի տերևները չորացնել, փոշի դարձնել ու խմել 2-4 գ: Այն բուժում է արգանդի արյունահոսությունը:

❖ 1 ճ/գ կտրատած ջրապղպեղին ավելացնել 1 բաժակ եռացրած ջուր, թրմել և ընդունել օրը երեք անգամ՝ 1-ական ճ/գ: Օգտակար է ցավոտ դաշտանի, արգանդային արյունահոսության դեպքում:

❖ Արգանդի արյունահոսությունը կդադարի, եթե ազարիոնը վարդի յուղով տրորեք ու քսեք մեջքին:

❖ Կծոխուրի արմատի կեղլի ջրաթուրմը դադարեցնում է արգանդային արյունահոսությունը:

❖ Արգանդի արյունահոսությունը կդադարի, եթե ուղտի լեցու բույսի ճյուղերը եփեք և ջուրը խմեք, իսկ եթե պտուղը փորում մահացած լինի, դուրս կհանի:

❖ Արգանդի արյունահոսության դեպքում ընկույզի միջուկն այրել, գինով խմել կամ էլ ընկույզի կեղլի մոխիրը գինով խմել:

❖ Դարչինն ամրացնում է արգանդը:

❖ Արգանդի հիվանդությունների ժամանակ օգտակար են աղոխը՝ խակ խաղողը, աքաղաղի միսը:

## -19- ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ

❖ Սավեր քամել՝ անցկացնելով սև հացի և ածուխի շերտով, կիսով չափ ջուր ավելացնել և ցողման ձևով կիրառել արգանդի քաղցկեղի դեպքում:

❖ 630 գ մայիսյան մեղրին խառնել 635 գ կարմիր գինի, 350 գ ալոե (3,5 տարեկան ալոեն 5 օր չօրել, ապա նրա հաստ կեղև-ները քաղել): Խմել օրը երեք անգամ 1-ական թ/գ՝ ուտելուց 1 ժամ առաջ: Օգտակար է արգանդի քաղցկեղի դեպքում:

❖ Սպիտակաթորանքի դեպքում կաղնու կեղևից պատրաստված թուրմով կամ էլ շիրի լուսույթով (2 թ/գ շիրին ավելացնել 1 լ տաք ջուր) օրը երկու անգամ լվացում անել:

❖ Սոճու ասեղներով կամ դրանց հյութով տաք լոգանքներն օգտակար են սպիտակաթորանքի ժամանակ: Բուժման ընթացքում հարկ է խուսափել սեռական հարաբերություններից, իսկ հնարավորության դեպքում լավ կլինի շաբաթը երկու անգամ շոգեբաղնիք գնալ:

❖ Ետծննդաբերական մաքրումները հեշտացնելու և արագացնելու համար ռուս հեքիմները խորհուրդ են տալիս խմել կեչու տերևների եփուկ: Հարկավոր է 10 գ չորացրած ու մանրած տերևների վրա լցնել 1 բաժակ եռացրած ջուր, եփել: Ընդունել օրը մեկ անգամ:

❖ Կանացի օրգանների բորբոքվածության, անպտղության դեպքում հաճախ խմել երիցուկով պատրաստված թեյ:

❖ Ղանձլամերը բուժում է միոնան, ծվարանների խրոնիկական բորբոքումները, բորբոքումների հետևանքով առաջացած անպտղությունը:

❖ Ղանձլամերը կանխարգելում և բուժում է կարնագեղձի քաղցկեղը:

❖ Կանացի հիվանդությունների ժամանակ օգտակար է մայիսյան կեչու կեղևից պատրաստված թեյ:

❖ Սեղմված մատներով մերսեք կոնքերը: Այն ամրացնում է մեջքի մկանները և օգնում գինեկոլոգիական դժվարությունների դեպքում:

## ԸՆԿՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Ընկնավորությունը՝ էպիլեպսիան, համարվում է անբուժելի հիվանդություն: Ընկնավորներն ամսվա ընթացքում ունենում են 25 և ավելի նոպաներ: Էպիլեպտիկ նոպան ունի իր բնական ընթացքը, ուստի անհմաստ է հիվանդի վրա ջուր լցնելը, ապտակելը: Նոպան սկսվելու ժամանակ անհրաժեշտ է ընկնավորի ձախ ծեռքը դնել հատակին և ոտքով սեղմել նրա ճկույթը: Սովորաբար նոպան անցնում է: Պետք է հոգ տանել, որ հիվանդը լեզուն չկծի, փսխունքը չլցվի շնչառական ուղիները: Հարկավոր է արձակել հիվանդի հագուստի կոճակները, գրտին, գլուխը կողքի թեքել և նրա տակ որևէ փափուկ բան դնել, սեղանատամների արանքը մտցնել վիրակապով փաթարված գդալի պոչ: Եթե նոպայից հետո հիվանդը քնի, արթնացնել, տեղափոխել անկողին:

### Հիվանդության բուժման համար խորհուրդ է տրվում՝

❖ 10 օրերի ընթացքում 7 օր սնվել հացահատիկով, իսկ մյուս 3 օրերին ծոմ պահել ու աղոթել: Այդ ժամանակ հեղուկ քիչ օգտագործել: 2-3 կուրսից հետո հիվանդությունը կրուժվի:

❖ Հիվանդը 1 տարի պետք է քնի գառնուկի հետ: Նրա բուրդը ձգում է բացասական հոսանքները, և մարդը բուժվում է:

❖ Քրի մեջ պարբերաբար կաթեցնել ճակնդեղի հյութ:

❖ 9-10 օրերի ընթացքում 3 օր լրիվ քաղցած մնալ:

❖ Հաճախակի ծոմ պահել, սնվել բուսական հում սննդով:

❖ Ղանձլամերը բուժում է ընկնավորությունը:

❖ Վայրի և բալը նպաստում է ընկնավորության բուժմանը:

❖ Տիբերի բժիշկները հիվանդության պատճառը համարում են հաստ աղիքում ծինուների առկայությունը և առաջարկում հաջորդական լվացումներով հաստ աղիքը մաքրել դրանցից:

❖ Խսմել թթու դրած կաղամբի հյութ կամ խոզի մեզ:

❖ Օգտակար են թուզը, պղպեղը:

## ՊԱՏԱՆԵԿԱՆ ԲՇՏԻԿՆԵՐ

Պատանեկան բշտիկները հայտնվում են արբունքի տարիքում, բայց կարող են ի հայտ գալ նաև 30, 40 և նույնիսկ՝ 50 տարեկանում: Դրանք հիմնականում լինում են ճարպոտ և լայն ծակոտիներով մաշկ ունեցող մարդկանց մոտ: Բշտիկները տեղակայվում են դեմքի, մեջքի, կրծքերի վրա: Որոշ աղջիկների դեմքի մաշկը մաքուր է լինում, այնինչ կուրծքը և մեջքը պատված են լինում բշտիկներով: Եթե դրանք ժամանակին չբուժվեն, հասուն տարիքում տառապանք կապատճառեն: Մաշկի վրա բշտիկները թողնում են լայնացած ծակոտիների և սպիների նման այլանդակող հետքեր:

Պատանեկան բշտիկների առաջացման գործում մեծ դեր ունի աղեստամոքսային համակարգը: Մարտողության հետ կապված բոլոր խնդիրները բացասաբար են անդրադառնում մաշկի վիճակի վրա: Օրինակ՝ երկօրյա փորկապության հետևանքով ավելանում է պղուկների քանակը, քիթը փայլում է, իսկ դեմքը լվանալուց հետո կարծ ժամանակ անց մաշկի վրա առաջանում է ճարպի շերտ:

Պղուկներից ազատվելու համար միայն արտաքին բուժումը բավարար չէ: Բուժման հաջողությունը հիմնականում կախված է ճիշտ սննդից: Սննդակարգում հարկ է ներառել այնպիսի մթերքներ, որոնք պարունակում են հանքային նյութեր: Անհրաժեշտ է խուսափել ալրենենից, մսեղենից, ոչ դյուրամարս, ճարպոտ, տաքացրած և տապակած սննդից, սուր համեմունքներից՝ մանանեխից, տաքբեղից, քացախից, սոխից, սխտորից, աղի, թթու, կծու կերակուրներից: Խորհուրդ է տրվում սահմանափակել սուրճի, թուների, շոկոլադի, ալկոհոլի գործածությունը (լավ կլինի վերջինս ընդհանրապես չօգտագործել): Յնարավորինս շատ ուտել կարնամթերք՝ կաթ, կարնաշոռ, մածուն, ինչպես նաև՝ թարմ մոգեր ու բանջարեղեն:

Բշտիկների դեմ պայքարելիս կարևոր դեր ունի մաշկի հիգիենան: Հարկավոր է օրը երկու անգամ՝ առավոտյան և երեկոյան, տաք ջրով ու օճառով լվանալ դեմքը, ինչպես նաև մարմնի այն մասերը, որտեղ բշտիկներ են հայտնվել: Եթե դեմքի մաշկը չափանց ճարպոտ է, այն կարելի է լվանալ օրը երեք անգամ:

Բշտիկների և ճարպահոսության դեմ պայքարում ամենաարդյունավետ միջոցն արևն է: Պատահական չէ, որ արևոտ ամառվանից հետո մաշկը մաքրվում է: Կանխարգելիչ և բուժական ներգործություն են ունենում նաև մաքուր օդում քայլելը, օդափոխված սենյակում քնելը, պարբերաբար լողանալը, մարզումը, ֆիզկուլտուրան, սովաբուժությունը և այլն:

### **Պատանեկան բշտիկների դեպքում խորհուրդ է տրվում՝**

❖ Շշի մեջ լցնել սպիտակ շուշանի թարմ թերթիկներ, ավելացնել օղի կամ ջրով բացած սպիրտ, թողնել 2 շաբաթ: Քնելուց առաջ այս հեղուկով լվանալ բշտիկացանը: Ոուս հեքիմները հավաստիացնում են, որ սա բշտիկացանի և թարախային բորբոքումների բուժնան ամենաարդյունավետ միջոցներից է:

❖ Դեմքին քսել կերակրի սողա, 2-3 րոպե թողնել: Այն մաքրում է ճարպոտ մաշկը, բշտիկները:

❖ 1 թ/գ մեղրին խառնել 0,5 թ/գ դարչին, քսել դեմքին: 10-15 րոպե անց լվացվել: Օգտակար է թարախաբշտիկների և կորյակների առկայության դեպքում:

❖ Կովալգինի ծաղիկներից պատրաստված եփուկով թրջոցն օգտակար է թարախային կորյակների դեպքում:

❖ Օճառախոտի ծեծած հատիկների վրա եռացրած ջուր լցնել, 5 րոպե եռացնել և այդ եփուկով թրջոց դնել:

❖ Ալոեի տերևները եռացրած ջրով լվանալ, չորացնել, 10 օր պահել մոլոր և սառը տեղում, այնուհետև դրանք, մանրել, հյութը քամել, քսել բշտիկներին: Ամեն անգամ պետք է օգտագործել նոր քամած հյութ:

## -23- ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ

❖ Ալոեի տերևները 10 օր պահել մութ և սառը տեղում, ապա մանրել, շիլա դարձնել, վրան լցնել եռացրած ու սառեցրած ջուր (1:5), 1 ժամ թրմել, 2-3 րոպե եռացնել և քամել: Եփուկով լվանալ բշտիկացանը:

❖ Այրած սմբուկի մոխիրը ներծծում է թարախոտ բշտիկները:

❖ Խսմել արյունը մաքրող բույսերի եփուկներ: Օգտակար են եռագույն մանուշակը, անանուխը:

❖ 2 ճ/գ քարխոտի արմատների վրա լցնել 0,5 բաժակ եռացրած ջուր, եռացնել ու եփուկով թրջոց դնել: Օգնում է դժվար լավացող կորյակային թարախակալումների, ցանի դեպքում:

❖ Կեչու բողբոջները 2-3 ժամ թրմել, քամել և դրանով լվանալ բշտիկները:

❖ 1 ճ/գ կեչու բողբոջների վրա լցնել 1 բաժակ եռացրած ջուր, 15-20 րոպե եփել, սառեցնել և քամել: Ստացված եփուկով թրջոցներ դնել կամ էլ դրանով լվանալ բշտիկները:

❖ ճաշելուց առաջ կամ այդ ընթացքում 1-2 թ/գ գարեջրի խմորիչ ընդունել:

❖ Բաժակի 3/4-ը եռացրած ջուր լցնել, ավելացնել 10 գ խմորիչ, մի փոքր շաքարավազ, 1 ժամ պահել մութ տեղում, ապա խմել: Բուժնան կուրսը 20 օր է: Երեք շաբաթ ընդմիջելուց հետո բուժնան կուրսը կրկնել:

❖ Բշտիկների վրա դառը նուշ քսել:

❖ Ըստ Ամիրդովլաթի, բշտիկների դեմ օգտակար է պիստակի յուղը:

❖ Զվի դեղնուցը հարել, քսել դեմքին: 15-20 րոպեից լվանալ: Վերացնում է բշտիկները:

❖ Զվի սպիտակուցը լավ հարել, խառնել մեղր, աղ, այսուր: Ստացված զանգվածը քսել դեմքին, 15-20 րոպեից լվանալ:

❖ Բշտիկների վրա հին մեզով թրջոց դնել:

## ՀՐԱԾԱ ԳՈՐԾ ԼՈՇԱԿԸ

Լոշտակը՝ մանրագորը, եղել է Սողոմոն Իմաստունի ծառը, որից մի կտոր դրված էր նրա մատանու տակ, և դրա շնորհիվ էլ բոլոր գազաններն ու սողունները հնազանդ էին նրա իրամաններին։ Ալեքսանդր Մակեդոնացին իր աշխարհակալ թագավորությանը հասել է այս ծառի գորությամբ։ Ծարի փայտը նա մշտապես պահում էր իր մոտ ու սրա գորությամբ էլ ղեկավարում էր թագավորությունը։

Լոշտակի արմատը նման է կանգնած մարդու, իսկ տերևները պառկած են հողին։ Ունի կարմրավուն մանր պտուղներ, իսկ բույրը մեղք է հիշեցնում։ Այն աճում է այգիներում ու լեռներում։ Մանրագորը կարելի է հանել միայն այն ժամանակ, եթե Դրատը գտնվում է Խոյի կամ Այծեղջուրի համաստեղությունում։ Բույսը հարկավոր է հանել երեքշաբթի օրը՝ արևածագին։ Նրա չորս կողմը փորում են այնպես, որ ինքն իրեն կախված մնա, բերում են մի քանի օր սոված պահված շանը, վիզը պարան են գցում, որի ծայրը կապում են լոշտակի արմատին։ Մի քանի մետր հեռանալով՝ շանը ձայն են տալիս։ Կենդանին քաշում է պարանը՝ հանելով բույսի արմատը։ Դրանից հետո շունը սատկում է։ Արմատը հանելով՝ անհրաժեշտ է սպիտակ կտավով փաթաթել ու պահել։

Լոշտակի չքացված ծաղիկը փաթաթում են քարանե լաթով, յոթնագույն աբրեշումով կամ դերձանով և կապում լուսնոտի վզին։ Ինչքան երկար մնա կապված, այնքան ժամանակ էլ հիվանդությունը չի անհանգստացնի։ Զառանցող կամ խելացնող հիվանդներն իրենց շատ լավ կզգան, եթե այս բույսն այրվի կրակի վրա, և նրանք շնչեն դրա բույրը։ Բոլոր բժշկապետերը գրում են, որ լոշտակ ունեցողի միտքը բացվում է, պայծառանում, և նա կարող է իմանալ երկրային ու երկնային գաղտնիքներ, որոնք հասու չեն սսհասարակ մահկանացուներին։ Գիշերն այս բույսի տերևներն ու կեղևն այրվում են և փայլում կրակի պես։

## ԱՐՏԱՍՈՎՈՐ ԱՅՔՈՒԹԵՆ

1893 թ. հոլանդացի բժիշկ Եյքմանը որոշեց թողնել իր հայրենիքը և բնակություն հաստատել Յավա կղզում: Այնտեղ մոլեգնում էր բերի-բերի սոսկալի հիվանդությունը: Այն թափանցել էր նաև Յարավային Ամերիկայի և Աֆրիկայի շատ երկրներ, որտեղ բնակչությունը գլխավորապես սնվում էր բրնձով: Յիվանոի ծեռքերը թմրում էին, ոտքերն ու վիզը՝ կծկվում: Եյքմանի առաջարկած դեղերն անզոր էին բուժելու այդ հիվանդությունը: Մի անգամ, անցնելով հավանոցի կողքով, երիտասարդ բժիշկը նկատեց, որ հավերի պարանոցները ևս ծովել էին ջղաձգությունից: Պարզվեց, որ վերջիններիս կերակրում էին սպիտակ գտված բրնձով: Բավական էր, որ նա գտված բրնձին խառներ մի քիչ՝ բրնձի հատիկ-ների բաղանքներ, հիվանդությունն անմիջապես բուժվում էր:

1912 թ. լեհ գիտնական Ֆունկին հաջողվեց բրնձի թեփից և թթվանորից ստանալ մի նյութ, որը բուժում էր բերի-բերի հիվանդությունը: Գիտնականի ստացած նյութի 4 մգ-ը բուժում էր հիվանդ աղավնուն: Այդ նյութը անվանեցին վիտամին՝ կենսանյութ:

Գիտնականները պարզեցին, որ լնդախտը կարելի է բուժել նույնքան հեշտ, որքան՝ բերի-բերին, բայց՝ այլ նյութերի օգնությամբ: Բրնձի թեփի փոխարեն հիվանդներին տալիս էին թարմ կաղամբ, կարտոֆիլ, կանաչ սոխ: Սև հաղարջը, կիտրոնը, լոլիկը ևս հիանալի դեղամիջոցներ էին: Դրանցում նույնպես առկա էին վիտամիններ: Շուտով հաղթահարվեց պելագրան, որն առաջանում էր այն երկրներում, որտեղ մարդիկ սնվում էին միայն եգիպտացորենով: Յիվանդությունն սկսվում էր աղիքների գործունեության խանգարումով, մարմնի վրա ի հայտ էին գալիս փոքրիկ կարմիր բծեր: Յիվանդները երբեմն խելացարվում էին: Պելագրան բուժվում էր, երբ նրանց տալիս էին կենուանու յարողից պատրաստված կերակուր, ծու, կաթ, գարեջրի խնորիչ: Վիտամինների հայտնագործումը բազում մարդկային կյանքեր փրկեց:

Այժմ հայտնի են 20-ից ավելի տարատեսակ վիտամիններ,

որոնք տարածված են բնության մեջ, առկա են կենդանիների ու մարդկանց մկաններում, նյարդային հյուսվածքներում, յարդում, արյան մեջ: Աչքի ցանցաթաղանթում կա վիտամին A, որը հնարավորություն է տալիս տեսնել թույլ լուսավորության ժամանակ: Օրգանիզմը դժվարությամբ է արտադրում այդ վիտամինը, և այն մենք ստանում ենք սննդի հետ: A վիտամին կա կաթի, հավկիթի, բանջարեղենի որոշ տեսակների մեջ: Օրգանիզմն այն կարող է ստանալ կարոտինից, որը պարունակվում է լոլիկում, գազարում: Վիտամինների գոնվ միջազգային հանձնաժողովը որոշել է դրանք նշանակել լատինական տառերով: Այդ տառը կամ այն հիվանդության սկզբնատառն է, որը բուժվում է այս կամ այն վիտամինով (օրինակ՝ C-ցինգա, B-բերի-բերի, P-պելագրա) կամ էլ նշանակվում է օրգանիզմի վրա վիտամինի ունեցած ներգործությամբ: Այսպես է ծնվել հրաշալի այբուբենը, որի տառերը տարեցտարի ավելանում են:

## Վիտամիններ

**A վիտամին:** Այս վիտամինի բացակայության կամ պակասի պատճառով մարդու քաշը նվազում է, նկատվում է ախտորժակի վատացում, տեսողության թուլացում, վնասվում են տեսողական օրգանները, դադարում է օրգանիզմի աճը, մաշկը թեփոտում է, չորանում, օրգանիզմ են ներթափանցում մանրէներ, որոնք առաջացնում են վարակիչ հիվանդություններ: A վիտամինն առկա է կաթի, ծվի դեղնուցի, ծկան, ծկան յուղի, կարագի, յարդի, երիկամի, պանրի, գազարի, լոլիկի, թրթնջուկի, դդումի, սոխի, սպանախի, մանդարինի, ծիրանի մեջ:

**C վիտամին:** Սա հակալնդախտային վիտամին է, պակասի դեպքում առաջանում է լնդախտ, որը վաստ է անդրադարձում ատամների վիճակի վրա: Կարևոր դեր ունի նաև նյութափոխանակության և օրգանիզմի կանոնավոր աճի համար: Վիտամինի անբավարության պատճառով առաջանում է հոգնածություն, քնկոտություն, գլխապտույտ, սրտխառնոց, նյարդային վիճակ, աշխատունակության անկում: Պարունակվում է մասուրի, թարմ մրգերի, խաղողի տերևների, կարտոֆիլի, կարմիր բողկի, կանաչ սո-

խի, կաղամբի, կանաչ տաքդեղի, կիտրոնի, նարնջի, մանդարինի մեջ:

**B<sub>1</sub> Վիտամին:** Այն նպաստում է նյութափոխանակությանը, իսկ բացակայության դեպքում նկատվում է օրգանիզմի լոնգիանուր թուլություն, աղեստամոքսային ուղղու գործունեության խանգարում, ախորժակի անկում, փորկապություն, բերի-բերի ծանր հիվանդություն, որի ժամանակ ախտահարվում է նյարդային համակարգը: Առկա է գարեջրի խնորասնկի, հացարույսերի, լոբագիների մեջ:

**B<sub>2</sub> Վիտամին:** Անհրաժեշտ է օրգանիզմում կանոնավոր նյութափոխանակությունն ապահովելու համար, նպաստում է երիտասարդ օրգանիզմի աճին: Վիտամինի բացակայության ժամանակ նկատվում է ախորժակի անկում, քաշը նվազում է, օրգանիզմը՝ թուլանում, լինում են գլխացավեր, բորբոքվում է բերանի լորձաթաղանթը, շրթունքների անկյուններում և աչքերի շրջանում ախտահարվում է մաշկը, աչքերը կարմրում են, իսկ տեսողությունը՝ վատանում: Առաջանում են պեպեններ, պիգմենտային բծեր: B<sub>2</sub> պարունակվում է կաթի, կարնամբերքի, յարդի, ձվի, խնորասնկերի, երիկամի, ձկան, ընտանի թռչնանսի մեջ:

**B<sub>6</sub> Վիտամին:** Մեծ նշանակություն ունի ստամոքսի թթվայնության կարգավորման գործում, լավացնում է հյուսվածքների սնուցումը, նպաստում լորձաթաղանթի վերականգնմանը: Կանոնավորում է արյան մեջ պղնձի և երկաթի կուտակումը, մասնակցում է արյան ստեղծմանը, բարերար ազդեցություն է ունենում կենտրոնական նյարդային համակարգի վրա: Պարունակվում է մսի, յարդի, ձկան, ձվի դեղնուցի, խնորիչների, բանջարեղենի, մրգերի մեջ:

**B<sub>7</sub> Վիտամին:** Մասնակցում է նյութափոխանակությանը, պակասի դեպքում առաջանում է մաշկաբորբ, մկանային ցավ, ընկճված վիճակ, մազաբափություն, ախորժակի անկում: Առկա է ձվի դեղնուցի, յարդի, խնորասնկերի, ծաղկակաղամբի, սոյայի մեջ:

**B<sub>8</sub> Վիտամին:** Այն մասնակցում է ճարպափոխանակությանը, յարդը պաշտպանում է ճարպակալումից: Պարունակվում է սոխի, լոբազգիների, ցորենի, նարնջի, տամնի, չամիչի, սեխի, տավարի սրտամկանի և ուղեղի մեջ:

**B<sub>12</sub> Վիտամին:** Սա մտնում է արյան յուրաքանչյուր կարմիր գնիկի բաղադրության մեջ, իսկ պակասի դեպքում առաջանում է

ծանր հիվանդություն՝ սակավարյունություն: Այն նյութափոխանակության կատալիզատոր է, նպաստում է արյունաստեղծնան գործնքացին: Օգտագործվում է անենիայի, պոլիոնելիտի, բրոնխիալ ասթմայի, սարդի ախտահարումների ժամանակ՝ նրա գործառույթը վերականգնելու համար: B<sub>12</sub> վիտամինով հարուստ են ձվի դեղնուցը, պանիրը, կաթը, միսը, սարդը:

**PP վիտամին:** Կարենոր է օրգանիզմի կանոնավոր գործունեության համար, իսկ բացակայության պատճառով առաջանում է բերանի լորձաթաղանթի բորբոքում, պելագրա, մաշկը թեփակալում է, խանգարվում է նյարդային համակարգի, աղեստամոքսային ուղղու գործունեությունը: Պարունակվում է վարսակածավարի, սոյայի, տարեկանի և ցորենի հացի, լոլիկի, գազարի, կաղամբի, կարտոֆիլի, սարդի, գարեջրի և հացի խմորիչների մեջ:

**P վիտամին:** Կարգավորում է արյան մակարդելիությունը, մազանոթների թափանցելիությունը և դրանց պատերի ամրապնդումը: Կանխում է C վիտամինի պակասի հետևանքով տեղի ունեցող արյան զեղումը: Այն առկա է սև հաղարցի, մասուրի, նարնջի, կիտրոնի, մաղաղանոսի մեջ:

**K վիտամին:** Նպաստում է արյան արագ մակարդմանը, իսկ պակասի դեպքում, եթե վնասվում է անգամ ամենափոքր արյունատար անոթը, սկսվում է երկարատև արյունահոսություն: Պարունակվում է կաղամբի, սպանախի մեջ:

**E վիտամին:** Բացակայության կամ պակասի ժամանակ խանգարվում է սեռական գեղձերի գործունեությունը: Տղամարդկանց մոտ առաջանում է սեռական անկարողություն, իսկ կանանց մոտ խախտվում է դաշտանային ցիկլը: Պարունակվում է բուսայուղի, կաթի, մսի, սարդի, կաղամբի, սպանախի, եգիպտացորենի, գարեջավարի, հավկիթի, ընկույզի, նշի, գետնանուշի, խնձորի, մեջ:

**D վիտամին:** Այն երբեմն անվանում են «արևի լուսի վիտամին»: Նպաստում է ոսկորների զարգացմանն ու ամրապնդմանը, իսկ բացակայության հետևանքով առաջանում է ռախիտ հիվանդությունը, որի ժամանակ պակասում է ոսկորների աղերի պարունակությունը, դանդաղում է երեխայի աճը, ծովում են ոտքերը, գլուխն ու փորը մեծանում են, երեխան ընկալունակ է դառնում տարատեսակ հիվանդությունների նկատմամբ: D վիտամինով հարուստ են ձկան յուղը, սարդը, ձվի դեղնուցը:

## ԱՂԵՍՏԱՄՈՔՍԱՅԻՆ ՈՒՂՈՒ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ❖ Նուան կեղևը մանրել, 1 բաժակ ջրով մարմանդ կրակի վրա 15 րոպե եփել ու 2 օրում խմել: Այն բուժում է աղիքները:
- ❖ Ոչխսարի գլխի արգանակով հոգնան բուժում է աղիքները:
- ❖ Չամիչը բուժում է աղիքային հիվանդությունները:
- ❖ 1 բաժակ վարսակի վրա լցնել 1 լ ջուր ( $80^{\circ}\text{C}$ ), թողնել 10 ժամ, քամել, խառնել 1,5 ճ/գ մեղր, կիտրոնի հյութ և խմել: Օգտակար է աղիքային հիվանդությունների դեպքում:
- ❖ Սեխը և նրա կորիզը մաքրում են աղիքները:
- ❖ Կաքնովի մաքրում է աղիքները:
- ❖ Ծներեկը, բալը, հաղարջի կորիզները կարգավորում են աղիքների աշխատանքը:
- ❖ Մանդարինը շատ օգտակար է աղեստամոքսային հիվանդությունների ժամանակ, ակտիվացնում է աղիքների աշխատանքը:
- ❖ Աղիքների խոցի դեպքում խորհուրդ է տրվում հոն ուտել:
- ❖ Կովի կաթը մեղրով խմելն օգնում է աղիքային խոցերին:
- ❖ Խոզի ճարպն օգտակար է աղիքային ուռուցքների և խոցերի ժամանակի:
- ❖ Աղիքային խոցերի դեպքում խաշած բրնձի ջրով հոգնա անել:
- ❖ Սալորի հյութը բուժում է աղիքային, իսկ սալորը՝ աղեստամոքսային ցավերը:
- ❖ Աղեստամոքսային հիվանդությունների ժամանակ ուտել սերկվել:
- ❖ Ամեն օր մի քանի գդալ սպիտակաձավարի շիլա ուտել: Ըստ տիբեթական բժշկության, այն բարերար ազդեցություն է ունենում աղիքների ու աղեստամոքսային ուղղու վրա:
- ❖ 1-ական թ/գ տերեփուկը, եղեսպակն ու երիցուկը 1 բաժակ եռացրած ջրում թրմել, սառեցնել, քամել: Ընդունել օրը 5-7 անգամ 1-ական ճ/գ: Խորհուրդ է տրվում կոլիստի (հաստ աղիքի բոր-

բոքում), աղեստամոքսային ուղու այլ հիվանդությունների ժամանակ:

❖Կոլիտի դեպքում օգնում են եզան լեզվի հյութը և սամիթը:

❖Կոլիտի ժամանակ օրական խմել 20-30 գ քնջութի յուղ:

❖Աղեստամոքսային հիվանդությունների դեպքում օգտակար է կեչու սև սունկը՝ չափան: Թարմ սունկը լվանալ, քերել, ավելացնել  $50^{\circ}\text{C}$  ջուր (1:5), 2 օր թրմել, քամել՝ ճզմելով սմկի նստվածքը: Ընդունել օրը 3 բաժակ՝ ուտելուց կես ժամ առաջ: Թուրմը սառը տեղում կարելի է պահել 4 օր: Չափան նաև լավացնում է այն մարդկանց ինքնազգացողությունը, ովքեր տառապում են չարորակ հիվանդություններով:

❖Ծորենին մաքրում է ողջ աղեստամոքսային ուղին:

❖Աղեստամոքսային հիվանդությունների ժամանակ առավոտյան և երեկոյան խմել 1-3 թ/զ կտավատի փոշի՝ խառնելով կարի, ջրի կամ հյութի հետ:

❖Խսավիծը բուժում է աղեստամոքսային ուղու հիվանդությունները:

❖Օրական 2-3 պճեղ սխտոր ուտելը բուժում է աղեստամոքսային ուղու մի շարք հիվանդություններ:

❖Ղանձլամերը (մօրօզնիկ) հիանալի կերպով մաքրում է աղիքները, շատ օգտակար է աղիքների ուռուցքի և տասներկումատնյա աղիքի խոցային հիվանդությունների ժամանակ:

❖Տասներկումատնյա աղիքի խոցային հիվանդությունների դեպքում անորի վիճակում խմել կարտոֆիլի  $3/4$  բաժակ թարմ հյութ, հետո կես ժամ պառկել, իսկ 1 ժամից կարելի է ուտել: Բուժման կուրսը 10 օր է, ապա 10 օր ընդմիջել ու վերսկսել կուրսը:

❖Տասներկումատնյա աղիքի խոցի դեպքում օգտակար է չիչխանի յուղը, որը պետք է խմել օրը 2-3 անգամ 1 թ/զ՝ ուտելուց 30-40 րոպե առաջ:

❖Չիչխանի հյութն ու ջրաթուրմն օգտակար են աղեստամոքսային ուղու հիվանդությունների ժամանակ:

❖Երեկոյան 1-2 ճ/զ բրինձը լվանալ, ավելացնել այնքան ջուր, որ հատիկները ծածկվեն: Առավոտյան անորի վիճակում ուտել՝ երկար ժամանակ ծամելով: 4 ժամ հեղուկ չի կարելի խմել: Այս միջոցն աղիքներից վերացնում է բոլոր հիվանդությունները:

## ԱՏԱՄՈՔՍԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

❖ Ստամոքսի խոցի դեպքում կարտոֆիլը մաքրել, առանց աղի եփել: Անալի ջուրը խմել օրը երեք անգամ 0,5-ական ճ/գ: Ամեն անգամ խմել կարտոֆիլի թարմ ջուր:

❖ Էմալապատ կաթսայի մեջ լցնել 1 ճ/գ եզան լեզու (ջղախոտ) և 1 լ եռացրած ջուր: Մարմանդ կրակով 10 րոպե եփել: Փաթթել տաք ծածկոցով, թրմել 24 ժամ: Քամել, ընդունել օրը երեք անգամ՝ ուտելուց 15-20 րոպե առաջ: Օգտակար է խոցի ժամանակ:

❖ 50 գ կեչու բողբոջներին ավելացնել 500 գ օղի, 10 օր թրմել: Խմել օրը երեք անգամ 0,5-1 թ/գ՝ ուտելուց 15-20 րոպե առաջ: Այս թուրմը բուժում է ստամոքսի խոցը:

❖ Ստամոքսի խոցի դեպքում խմել հաղարջի հյութ:

❖ Խոցի ցավերի ժամանակ խմել մատուտակի արմատի թարմ հյութ:

❖ 10 գ մատուտակի արմատը, 6 գ նարնջի կեղևը 1/2 բաժակ ջրով եռացնել այնքան, որ հեղուկը կիսով չափ պակասի, ապա խառնել 60 գ մեղր: Այս չափաբաժինն ընդունել օրվա մեջ երեք անգամից: Օգնում է խոցի դեպքում: Բուժման կուրսը 1 ամիս է:

❖ 30-ական գ մատուտակի արմատին, թարխոտին, տուղտի արմատին ավելացնել 10 գ ծիծեռնախոտ: Ստացված խառնուրդից 2 ճ/գ լցնել 1 բաժակ եռացրած ջրի մեջ և ջրային գոլորշու վրա 30 րոպե տաքացնել, սառեցնել, քամել: Ստացված 200 մլ բուժիչ հեղուկը խմել օրը երեք անգամ ուտելուց 30 րոպե առաջ 1/3 բաժակ:

❖ Սուրճը հակացուցված է ստամոքսի խոցի դեպքում, այն կարող է բացել խոցը:

❖ Յածր թթվայնությամբ գաստրիտի դեպքում օգտակար է թարմ կաղամբի հյութը, որը կարելի է խառնել կիտրոնի և նռան հյութերին: Խմել օրը 1 բաժակ 3-4 անգամից՝ ուտելուց կես ժամ առաջ: Կաղամբի հյութը բարձրացնում է ստամոքսի թթվայնությունը: Բուժման կուրսը 3-5 ամիս է:

❖ Եզան լեզվի տերևները լվանալ, հյութը քամել ու խմել: Խորհուրդ է տրվում ստամոքսի խոցի, գաստրիտի ժամանակ:

❖ Յածր թթվայնությամբ գաստրիտի դեպքում ուտել դդում, դադի:

❖ Բարձր թթվայնությամբ գաստրիտի ժամանակ չի կարելի խմել լոլիկի և վարունգի հյութ:

❖ Ալոեի 100 գ հյութին խառնել 100 գ մեղր: Ընդունել օրը երեք անգամ 1-ական թ/զ՝ ուտելուց առաջ: Բուժման կուրսը երեք շաբաթ է: Օգտակար է գաստրիտի դեպքում:

❖ Ուռւս հեքիմներն առաջարկում են գաստրիտը բուժել կանաչ խնձորով: Անհրաժեշտ է խնձորները լվանալ, քերել: Ընդունել ամեն օր՝ վաղ առավոտյան: Դրանից 4-5 ժամ հետո ոչինչ չուտել ու չխմել: Բուժման կուրսը 1 ամիս է: Երկրորդ ամսում գործողությունը կրկնել շաբաթական 2-3 անգամ, երրորդ ամսում՝ 1 անգամ:

❖ Գաստրիտով հիվանդները չպետք է գիշերը խնձոր ուտեն:

❖ Բարձր թթվայնությամբ գաստրիտի և խոցի ժամանակ ուտելուց հետո պետք է խմել տաք մեղրածուր կամ էլ ուտել մեղր, իսկ ցածրի դեպքում ուտելուց առաջ խմել սառը մեղրածուր կամ ուտել մեղր:

❖ Գաստրիտով հիվանդներն ամեն օր պիտի ուտեն վարսակածավարից պատրաստված շիլա:

❖ Ըստ տիբեթական բժկության, գաստրիտի դեպքում հարկավոր է ուտել լոռամրգի (կլյուկվա):

❖ Խորնիկական գաստրիտի ժամանակ օրական խմել 20-30 գ քնջութի յուղ:

❖ Լորու չորացրած հատիկներն աղալ, 1 թ/զ փոշու վրա լցնել 0,5 բաժակ ջուր: Խմել անոթի վիճակում օրը 1-2 անգամ: Այն օգտակար է ստամոքսին:

❖ Մի բուռ ծիծեռնախոտը լցնել թանգիֆի մեջ, կապել, դնել ապակյա տարայի մեջ, ավելացնել 1 բաժակ շաքարավազ, 1 ծ/գ կեֆիր կամ թթվասեր, 1 բաժակ տաք ջուր, որը նախապես պիտի եռացրած լինի: 7 օրից քամել, և ամեն օր խմել այդ կվասը: Օգնում է գաստրիտի, ստամոքսի և բարակ աղիքների պոլիպների դեպքում:

❖ Բարձր թթվայնությամբ գաստրիտի, ստամոքսի և տասներկումատնյա աղիքի խոցային հիվանդությունների ժամանակ անորի վիճակում խմել 3/4 բաժակ կարտոֆիլի թարմ հյութ: Կես ժամ պառկել, 1 ժամից կարելի ուտել: 10 օրից 1 օրով ընդունել, որից հետո կրկնել կուրսը:

❖ Բարձր թթվայնությամբ գաստրիտի ժամանակ 10-15 օր կիրառել խաղողային մոնոնդիետա, այսինքն՝ միայն խաղող ուտել:

❖ Ստամոքսահյութի ցածր թթվայնության դեպքում ամեն օր ուտել 200 գ լոլիկ:

❖ Թթվայնությունն իջեցնելու համար ռուս հեքիմներն առաջարկում են խմել գազարի հյութ, որը պետք է պատրաստված լինի լավ հասունացած գազարից: Ընդունել օրը մեկ անգամ՝ 1/2 բաժակ:

❖ Գաստրիտի բուժման համար լավագույն միջոց է համարվում դանձլամերը:

❖ Ստամոքսի կատարի դեպքում օգտակար է մատնունու (մայրախոտ) արմատներից պատրաստված թուրմը: 1 ծ/գ ծեծած արմատին ավելացնել 1 բաժակ ջուր, մարմանդ կրակի վրա 20 րոպե եռացնել՝ ծածկելով կափարիչով: Սարեցնել, քամել, ընդունել օրը 3-5 անգամ 1-ական ծ/գ:

❖ Սամիթի վերգետնյա մասը մանրել, 1 թ/գ բույսի վրա լցնել 500 մլ եռացրած ջուր, 1 ժամ բողմել: Օգտագործել օրը 2-3 անգամ 0,5-ական բաժակ՝ ուտելուց 20 րոպե առաջ:

❖ Ավելուկով ճաշը բուժում է ստամոքսի այրոցը:

❖ Ստամոքսի այրոցի ժամանակ ամեն օր ուտել 2-3 հատիկ թթած ոլոռ:

❖ Սալորի թարմ հյութը բուժում է ստամոքսի ցավերն ու այրոցը:

❖ Զվի կճեպն այնքան բովել, մինչև դեղնավուն դառնա: Փոշի դարձնել և ընդունել օրը մեկ անգամ՝ ուտելուց առաջ: Բուժման կուրսը 10 օր է: Կիրառել ստամոքսի ցավերի ժամանակ:

❖ Ստամոքսի տիած հոտի, լորձաթաղանթի բորբոքման և խոցի դեպքում խորհուրդ է տրվում օրական ընդունել 3-6 գ հասած մանդարինի կեղև: Իսկ խակ մանդարինի կեղևը վերացնում է ստամոքսի ցավերը:

❖ Ավելուկի հունդը գինով խմել: Այն բուժում է ստամոքսի ցավերը:

❖ Ծիրանի չրից եփուկ պատրաստել և առանց շաքարավազի խմել: Բուժում է ստամոքսի ցավերը:

❖ Թթու բալը, կեռասը մաքրում են ստամոքսը:

❖ Ստամոքսի խոցի համար օգտակար է խաղողի դոշաբը:

❖ Ստամոքսը բուժելու համար նոան կեղևը մանրել, 1 բաժակ ջրով մարմանդ կրակի վրա 15 րոպե եփել և 2 օրում բուրմն ընպել: Թթու նուռը կարգավորում է ստամոքսի վիճակը:

❖ Դարչինը, ազոխը, բրինձը, մոշի տերևների եփուկը, դամբուլը, հազարն ամրացնում են ստամոքսը:

❖ Դդմիկը, դանդուռը, ծորենին, սպասը, թուզը, ազնվամորին, նոան հյութն օգտակար են ստամոքսին:

❖ Ստամոքսը ջերմացնելու համար ուտել կիտրոնի կեղև:

❖ Ստամոքսի հիվանդություն ունեցողներին օգտակար են աղով բուված քնջուրը, քամած մածունը:

❖ Աղամաթզի հաճախակի օգտագործումն ստամոքսում ծանրություն է առաջացնում:

❖ 3 տարեկան ալոեի տերևները 10 օր պահել սառնարանում, մանր կտրատել, քամել, ավելացնել 3 կաթիլ 5 %-ոց յոդ, մեխակի թուրմ (5 հատիկ մեխակի վրա լցնել 0,5 բաժակ եռացրած ջուր, ծածկել, 6 ժամից քամել): Օգտագործել օրը երկու անգամ 1-ական ճ/գ՝ ուտելուց 15 րոպե առաջ: Մի քանի օրից ցավեր կլինեն, այնուհետև կանհետանան: Օգտակար է ստամոքսի քաղցկեղի ժամանակ:



## ՕԳՏԱԿԱՐ Է ԻՍԱՆՆԱԼ



Զուկ ուտելը շատ օգտակար է, քանի որ օրգանիզմը հեշտորեն է մարսում այն: Նրա սպիտակուցը պակաս արժեքավոր չէ, քան` մսինը: 200 գ ծկան միսը բավարարում է չափահաս մարդու օրգանիզմի կենդանական սպիտակուցի ամենօրյա պահանջը: Զուկը «թեք» սննդամբերք է և չափազանց օգտակար է այն մարդկանց համար, ովքեր ունեն աղեստամոքսային խնդիրներ: Խորհուրդ է տրվում նաև վիրահատության ենթարկված մարդկանց, ովքեր քիչ են շարժվում, որի հետևանքով էլ մարսողությունը դժվարանում է:

Ոչ միայն ձուկը, այև ծովային բոլոր մթերքները կարևոր են օրգանիզմի գործունեության համար, որովհետև շատ կալցիում են պարունակում: Խսկ այն մեջ ոեր ունի օրգանիզմի կենսագործունեության ու դիմադրողականության գործում:

Խորհուրդ է տրվում ձուկը պատրաստել բուսական, նախաճաշութելի է՝ ձիթապտղի յուղով: Ցանկալի է ձուկն ուտել թարմ, այլ ոչ թե՝ սառեցրած վիճակում, սակայն դա չի նշանակում, որ վերջինս գուրք է անհրաժեշտ սպիտակուցներից: Առողջ մարդիկ ձուկը կարող են ուտել թե՝ խաշած, թե՝ տապակած, թե՝ խորոված վիճակում, իսկ նրանք, ովքեր ունեն որոշ հիվանդություններ, ավելի լավ կլինի, որ սնվեն խաշած կամ շոգեխաշած անյուղ ձկով: Զկնային կերակրատեսակները պետք է ուտել ճաշին և ընթրիքին. դրանք ավելի լավ են յուրացվում օրվա այդ պահերին:

Բուսական և կենդանական յուղերի հետ համեմատած՝ ծկան յուղն առավել օգտակար է և իջեցնում է արյան մեջ խոլեստերինի մակարդակը: 1-2 շաբաթ տևող ծկնային դիետայի դեպքում նկատվում են մի շարք դրական փոփոխություններ: Տարածված է այն թյուր կարծիքը, թե ծկան յուղը փոփարինում է ծկան մսին ու կարելի է բավարարվել այն խմելով, բայց դա այդպես չէ: Յուրաքանչյուրն ունի իր առավելությունները, և երկուսն էլ պետք է կիրառել:

## ԱԼԿՈՀՈԼԻ ՎՆԱՍՆԵՐԸ

Ալկոհոլը խիստ բացասական ազդեցություն է ունենում ողջ օրգանիզմի վրա: Չկա այնպիսի օրգան, որը ալկոհոլի հետևանքով դուրս չգա շարքից՝ կորցնելով իր գործառույթները: Ալկոհոլից առանձնապես շատ է տուժում տեսողությունը, քանի որ ցանցաթաղանթը և աչքերի նյարդերը վնասվում են, ճգնաժամերի պարագայում հնարավոր է անգամ տեսողության կորուստ: Չայնալարերը բորբոքվում են, ի հայտ է գալիս ալկոհոլային խռպոտություն, ծայրահետ դեպքերում՝ ձայնի կորուստ: Այն բացասաբար է անդրադառնում նաև շնչառական համակարգի վրա: առաջանում է թքերի բորբոքման, տուբերկուլյոզի նախատրամադրվածություն:

Ալկոհոլիկների մոտ այս հիվանդությունները շատ ծանր ընթացք են ունենում: Լյարդը փոքրանում է, դառնում է պինդ: Երբեմն այն դադարում է կատարել օրգանիզմում թույները չեզոքացնելու իր գործառույթը, որի հետևանքով էլ օրգանիզմն սկսում է հյուծվել: Ալկոհոլի չարաշահման պատճառով առաջանում է յարդի ցիրոզ: Նրա մշտական ազդեցությունից գրգռվում է նաև մարսողական ուղին, լինում է սրտխառնոց, ցավ, այրոց: Ստամոքսի լորձաթաղանթը դառնում է անհարթ, գորշ, նրա վրա առաջանում են թարախապալարներ, թարախակույտեր, լինում է արյունահոսություն, երբեմն էլ ստամոքսի պատերը ծակվում են: Յետազայում լորձաթաղանթի վրա կարող է նաև ուռուցք գոյանալ: Ենթաստամոքսային գեղձը, աղիքները, տասներկումատնյա աղիքը փոփոխության են ենթարկվում: Ի վերջո նկատվում է ախտրժակի անկում, և խրոնիկական թերսնուցումը հանգեցնում է օրգանիզմի հյուծման: Լուրջ փոփոխություններ են տեղի ունենում կենտրոնական նյարդային համակարգում: Մտածողության, կամքի, զգացմունքների ոլորտում նկատվում են խանգարումներ, հոգեկան աննորմալություններ: Սրտամկանը գերածում է, պատվում ճարպաշերտով: Զարկերակներն անդառնալի փոփոխություններ են կրում:

Կարող է առաջանալ ինֆարկտ, կարծրախտ, արյունազեղում: Երկամբներն ավելի լարված են աշխատում, իսկ եթե բորբոքված են, ալկոհոլի ազդեցությունից դրանց վիճակն ավելի է վատանում ու վերջապես հանգեցնում ցիրոզի:

Ալկոհոլը բացասաբար է անդրադառնում նաև հորմոնային համակարգի՝ հիպոֆիզի, վահանածն գեղձի, մակերիկամի վրա: Տուժում են նաև սեռական օրգանները, տղամարդկանց մոտ սեռական հակումը նվազում է, կորչում է սերունդ ունենալու ունակությունը: Ալկոհոլը չի կարելի համարել գրգռող միջոց, ընդհակառակը, այն նվազեցնում է սեռական կարողությունը:

Ալկոհոլի գործածությունից առաջանում է ավիտամինոզ՝ Վիտամինի պակասություն, որը հանգեցնում է օրգանիզմի դիմադրողականության նվազեցմանը: Մի խումբ տղամարդկանց հետազոտություններից պարզվել է, որ ալկոհոլային խմիչքները բացասական ազդեցություն են ունենում սպերմայի, երեխայի բնափորության և պաշտպանական համակարգի վրա:

Տարիների ընթացքում կատարված ուսումնասիրությունները փաստում են, որ ալկոհոլիզմը ժառանգական հիվանդություն է: Այդպիսի եզրահանգման են եկել Մեծ Բրիտանիայի համալսարաններից մեկի բժիշկ-փորձագետները: Գիտնականները կարծում են, որ ոգելից խմիչք օգտագործելիս որոշ մարդկանց գլխուղեղում «միանում են» գեները, որոնք մինչ այդ «ննջում էին»: Այդուհետև սպիրտային խմիչքների գործածությունը դաշնում է անհրաժեշտություն, որպեսզի ուղեղը կանոնավոր աշխատի, և զգացվում է անընդհատ մեծացող պահանջ խմիչքի նկատմամբ: Փորձագետները համոզված են, որ ժառանգականությամբ է բացատրվում այն երևույթը, որ որոշ մարդիկ կարողանում են դիմադրել ալկոհոլին՝ չդառնալով անհուսալի հարբեցողներ, իսկ ոնանք՝ ոչ, և այդ ամենի «մեղավորը» գեներն են: Ինչպես պնդում է գիտնականներից մեկը՝ Դևիդ այժմ հայտնի են մոտավորապես 1200 գեներ, որոնք արձագանքում են ալկոհոլին: Եթե հաջողվի պարզել, թե նրանցից որոնք են «պատասխանատու» հարբեցողության համար, ժառանգաբանները կստանան հզոր գենք՝ դրա դեմ պայքարելու գործում: Գիտնականների համար դեռևս պարզ չէ, թե ինչու ալկոհոլի վնասակար ազդեցությունը տարբեր է զանազան ժողովուրմերի մոտ: Օրինակ՝ բնիկ ամերի-

կացիները 33 անգամ ավելի են հակված ալկոհոլի վնասակար ազդեցությանը, քան` կովկասյան ցեղին պատկանող մարդիկ: Աշխարհում ամենաքիչ ալկոհոլն օգտագործում են ճապոնացիները, քանի որ նրանք ատում են այն:

**Ժողովրդական բժշկությունը հարբեցողության դեմ և «Երեկվա խրախնձանքից» դուրս գալու համար առաջարկում է՝**

❖Կեչու փայտերն իրար վրա շարել, վրան լցնել 1 կգ շաքարավազ, կրակը վառել: Երբ շաքարավազը հալվի, կրակը հանգնել ու ծուխը ներշնչել: Դրանից հետո եթե մարդն օղի խնի, սրտխառնոց կառաջանա:

❖Քսանօրյա քաղցր բուժում է հարբեցողությունը:

❖4 կանաչ խնձորի մեջ խրել 5-6 հաստ մեխ, 1 օր թողնել, հետո ուտել: Բուժման կուրսը 6 շաբաթ է:

❖Սորենու թփի մլակները հավաքել, օղու մեջ թրմել և մի քանի օրից թուրմը խմել: Բուժում է հարբեցողությունը:

❖Խումարից դուրս գալու համար թան խմեք:

❖Որպեսզի չհարթեք, խմելուց առաջ կարագ կերեք կամ էլ խմեք կիտրոնի հյութ:

❖Խումարի հետևանքները վերացնելու համար խմել 1 բաժակ թթու կաղամբի ջուր:

❖Ազղիսի՝ խակ խաղողի հյութն սթափեցնում է հարբածին:

❖Եթե նախորդ օրը լավ խմել եք, հաջորդ օրը մի՛ խմեք: Դա է՛լ ավելի կվատացնի ձեր վիճակը, և դժվարությամբ կսթափվեք:

❖5-6 կաթիլ անուշադրի սպիրտը խառնել 1 բաժակ սառը ջրին ու խմել: Այն սթափեցնում է հարբածին:

❖Առավոտյան անոթի վիճակում խմված տաք կաթը կրեթևացնի «Երեկվա խրախնձանքի» հետևանքները:

❖1 բաժակ սառը ջրին խառնել 20 կաթիլ դաղձի սպիրտ ու մեկ շնչով խմել: 1-2 րոպեից կազատվեք խումարի պատճառով առաջացած գլխացավից և այլ հիվանդագին երևույթներից:

❖Զեռքի ափերով արագ և ուժեղ շփել հարբածի ականջները:

## ԱԼԿՈՀՈԼԻ ՄԱՆՈՒԿ ԶՈՀԵՐԸ



Հղիության ընթացքում արգելվում է ալկոհոլի գործածությունը, այլապես երեխան կծնվի հոգեկան և մարմնական լուրջ խնդիրներով։ Ալկոհոլից տուժած երեխաների թիվն ԱՄՆ-ում տարեկան հասնում է 50.000-ի, որի մեկ քառորդը ծնվում է այլանդակ արտաքինով և սրտային հիվանդություններով։ Ալկոհոլի ազդեցության պատճառով երեխան կարող է լույս աշխարհ գալ մի շարք թերություններով՝ ունենալ փոքր և այլանդակված գլուխ, տափակած դեմք, կախված կոպեր, քթի ու շրթումքների միջև կարող է լինել մեծ տարածություն։ Հնարավոր է՝ ունենա ականջի բորբոքում, լսողության և տեսողության խախտումներ, վատ ատամներ։ Եթե նյարդային համակարգը կարգին չլինի, կառաջանա մտավոր հետամնացություն, կդանդաղի նորածնի աճը։

Ուսումնասիրություններից պարզվել է, որ ԱՄՆ-ում մտավոր հետամնաց երեխաների 20 %-ն ալկոհոլիկների զավակներ են։ Թմրեցնող դեղերն ուղղակիորեն ազդում են նորածնի ջղերի, իսկ ալկոհոլը՝ ողջ քիչների վրա։ Եթե հղիանալուց առաջ կինը դադարեցնի խնիչքի գործածությունը, ապա չի վնասի սաղմին, և երեխան առողջ կծնվի։ Քիչ չեն այն դեպքերը, երբ կանայք որոշ ժամանակ տեղյակ չեն լինում իրենց հղիության մասին և այդ ընթացքում ալկոհոլ են գործածում։ Գիտնականները հավաստիացնում են, որ հղիության առաջին երկու շաբաթներում ալկոհոլի ազդեցությունը մեծ չէ, բայց երբ սաղմը մարմնավորվում է, այն կարող է նրան վնաս պատճառել։ Սաղմն աճում և զարգանում է ինն ամիսների ընթացքում, իսկ մարմնի աճը հիմնականում ընթանում է վերջին եռամսյակում։ «Սեղմ» խնիչքներին ևս չի կարելի վստահել, գարեջրի, գինու և այլ «անմեղ» ըմպելիքների գործածությունը սաղմի վրա ազդում է այնպես, ինչպես՝ թունդ ալկոհոլային խնիչքը։ Խմիչքից պիտի խուսափել նաև երեխայի ծնվելուց հետո։ Կրծքով կերակրող մայրը, օրական 1-2 բաժակ խնիչք ըմպելով, անգիտակցաբար դանդաղեցնում է մանկան աճը։

## ԴՈՂԵՐՈՑՔ (ՏԵՇԴ)

❖ 3 թ/գ բոված, մանր աղացած սև սուլը, 2 թ/գ քերած ծովաբողկը 2 բաժակ ջրով 20 րոպէ եփել, քամել ու տաք վիճակում խմել օրը երկու անգամ՝ կեսական բաժակ: Ուստի հեքիմները հավաստիացնում են, որ երեք օրերի ընթացքում դողերոցքը կրուժվի:

❖ Տենդի դեպքում ոտքերը 1 րոպեով դնել սառը ջրով լի դույլի մեջ, հետո հագնել բրոյա գուլպաներ և 10-20 րոպէ քայլել:

❖ 1/2 թ/գ ուռենու մանրած կեղկը 1,5 բաժակ ջրով եփել մինչև մնա 1 բաժակ: Առավոտյան անոթի վիճակում մեղրով խմել:

❖ Եղրևանու (յասաման) 20 տերկը, 1 թ/գ օշինդր, 1/2 թ/գ էվկալիպտի յուղը 1 լ օղու մեջ թրմել: Խմել ուտելուց առաջ՝ 2 ճ/գ:

❖ Եղրևանու 12 տերկը երեկոյան եռացրած ջրում թրմել և թողնել ողջ գիշեր: Առավոտյան անոթի վիճակում խմել:

❖ 300 գ եղրևանու մանր ճյուղերը տերևներով հանդերձ 1 լ ջրում 20 րոպէ եռացնել, 2 ժամից քամել: Ընդունել օրը երեք անգամ 0,5-ական բաժակ:

❖ Եղրևանու 9 տերկը 100 գ մաքուր սպիրտի մեջ թրմել: Ընդունել օրը երեք անգամ՝ ուտելուց 15 րոպէ առաջ 1-ական ճ/գ՝ վրայից խմելով 1 ճ/գ եռացրած ջուր:

❖ 1 բաժակ եղրևանու թարմ տերևները 2 բաժակ ջրով եփել այնքան, մինչև մնա 1 բաժակ: Քամել, խմել դողերոցքի նոպայից առաջ՝ 1/5 բաժակ:

❖ Մանամեխի փոշին լցնել գուլպաների մեջ ու հագնել:

❖ 200 գ արևածաղկի թարմ արմատները 1 լ ջրում 20 րոպէ եփել, 3 ժամից թանգիֆով քամել: Ընդունել օրը երեք անգամ 0,5-ական բաժակ:

❖ Երբ արևածաղկի թերթիկներն սկսեն թափվել, գլխիկը կտրել, մանրել, լցնել ապակյա տարայի մեջ, վրան օղի ավելացնել: 1 ամիս պահել արևի տակ: Նոպայից առաջ ընդունել 20 կաթիլ, իսկ եթե նոպան կանխատեսելի չէ, խմել օրը երեք անգամ 1-ական ճ/գ՝ ուտելուց առաջ:

## ԹՈՔԵՐԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

❖ Չորացրած եղինջն աղալ, մեղրով շաղախել և ուտել: Օգնում է թոքերի ցավի դեպքում:

❖ Սև ձիբապտուղը կորիզով ուտել: Բուժում է թոքերի բոլոր տեսակի ցավերը:

❖ Թույլ թոքեր ունեցողներին սերկակիլ ուտելն արգելվում է:

❖ Ազոյսը, այծի կաթը, աղով բոված քնջութը, մածունը, թանը օգտակար են թոքախսին:

❖ 0,5 բաժակ եղեգի թերիկները եփել 0,5 բաժակ եռացրած ջրով: Խմել օրը երեք անգամ ամոթի վիճակում՝ նախապես եռացնելով: Կիրառել թոքախսի ժամանակ:

❖ Չինաստանում թոքախսող բուժում են իշախառանչով (խլրդածղրիդ): Հարկավոր է դրանք չորացնել, փոշի դարձնել ու խմել որևէ քաղցր օշարակով: Կարելի է միանգամից ընդունել 3 ճ/գ՝ վրայից գույ ջուր խմելով: 2-3 օրվա մեջ խմել 2-3 անգամ:

❖ Նոր մորթած խոզի փորոտիքի ճարպը հալել, խառնել կաթ (1:1), միասին եռացնել և տալ թոքախսով հիվանդին: Խմել 1/8 բաժակ՝ աստիճանաբար հասցնելով մինչև օրական 1 բաժակի:

❖ 1200 գ լորենու մեղրը կաթսայի մեջ հալել, ավելացնել 1 բաժակ մանր կտրատած ալոե, լավ եփել: 150 գ կեչու բողբոջները, 50 գ լորենու ծաղիկները, 2 բաժակ ջրով 1-2 րոպե եռացնել, քամել ու լցնել մեղրի վրա: Ստացված զանգվածին խառնել 100 գ ձիբապտի յուր: Պահել շշերի մեջ՝ սառը տեղում: Օգտագործելուց առաջ թափահարել: Ընդունել օրը երեք անգամ՝ 1-ական ճ/գ: Օգնում է թոքերի բորբոքման, թոքախսի դեպքում:

❖ Սպիտակ կեղևով 6 թարմ ծուն դնել ապակյա տարայի մեջ, ավելացնել 10 կիտրոնի քամած հյութ: Թանզիֆով բերանը ծած-

կել, փաթաթել մուգ գույնի հաստ թղթով: Պահել չոր, մութ և սառը տեղում: 6-8 օրից ձվի կճեպները երբ հալվեն, 300 գ լորենու մեղրը մի փոքր գոլացնել, լցնել տարայի մեջ՝ հավելելով 3/4 բաժակ կոնյակ: Այդ զանգվածը պահել մուգ շշի մեջ՝ չոր, մութ և սառը տեղում: Ընդունել օրը երեք անգամ 1-ական թ/գ՝ ուտելուց անմիջապես հետո: 3 շաբաթից դեղամիջոցը փշանում է: Օգտագործել թոքախտի ու թոքերի բորբոքման ժամանակ:

 Կաթսայի 2/3-ը լցնել վարսակ կամ գարի, իսկ 1/3-ը՝ կաթ: Ավելացնել խոզաճարպ, կափարիչով ծածկել ու դնել ջեռոցը: Անհրաժեշտ է լցնել այճքան կաթ, որ վարսակը կամ գարին լիովին եփվեն: Խնել օրը երեք անգամ 1-ական գավաթ: Այս դեղամիջոցով բուժվում է թոքախտը:

 Թոքախտով հիվանդներին պետք է ուժեղ սնունդ՝ կաթ, ծու, խոզի ճարպ, ինչպես նաև՝ անկողնային ռեժիմ, անդորր և մաքուր օդ:

 Առյուծագիի ցողուններն ու տերևները, եղերդի (ճարճատուկ) արմատները թրմել: Թեյի նման խմել օրը երեք անգամ 1-ական փոքր բաժակ: 9 շաբաթից թոքախտը կբուժվի:

 Սերկնիլը, խաղողը, գազարը, բողկի հյութն օգտակար են թոքախտի դեպքում:

 1 շիշ գինու մեջ լցնել ալոեի մեկ ցողուն, 4 օր թրմել: Թոքախտի ժամանակ ընդունել օրը երեք անգամ 1-ական գավաթ:

 Սխտորի օղեթուրմն օգտակար է թոքախտին: 1 լ օղու կամ սպիրտի մեջ լցնել 150 գ մանր կտրատած սխտոր, 15 օր պահել մութ տեղում: Քամել և օգտագործել:

 0,5 լ մաքուր սպիրտի մեջ լցնել ալոեի 4 ցողուն, 4 օր թրմել: Թոքախտի դեպքում խմել օրը երեք անգամ 40-ական կաթիլ:

 Կաթսայի մեջ լցնել 100 գ ջուր, 300 գ մեղր, մանր կտրատած ալոեի մեկ տերև: Մարման կրակով 2 ժամ եփել: Ընդունել օրը երեք անգամ 1-ական ծ/գ: Օգտակար է թոքախտի դեպքում:

 Ծլեցրած գարին աղալ, վրան լցնել  $70^{\circ} \text{C}$  ջուր: 4 ժամից քամել, խառնել մեղր: Խնել օրը 4-6 անգամ 0,5-ական բաժակ: Օգնում է թոքախտի դեպքում:

## 43- ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ

❖ Թոքախտը բուժում են ձիու կաթով՝ կումիսով, ինչպես նաև՝ արջի, շան կամ արջամկան ճարպով:

❖ Սոճու կոներն օղիով թրմել ու խմել: Բուժում է թոքախտը:

❖ Վերցնել 400 գ շաքարի դեղին գույնի մաք (մրգահյութ), 200 գ ալոե, որի տերևները պետք է կտրատել երկայնքով՝ 4 սմ երկարությամբ: Սանդի մեջ թևեկնախտեցը (կանիֆոլ) ծեծել: Բոլոր բաղադրիչները լցնել կավե պուտուկի մեջ, կափարիչով ծածկել, մի գիշեր թողնել ջեռոցում: Թանձր, մեղրանման զանգվածը մաղով քամել: Ընդունել օրը երեք անգամ 1-ական թ/գ՝ ուտելուց 1 ժամ առաջ: Դեղամիջոցը նախատեսված է 1 ամսվա համար, ապա 1 շաբաթ հարկավոր է ընդմիջել և կրկնել բուժումը: Դեքիմական այս միջոցը բուժում է թոքախտը:

❖ Սև պղպեղի և գինձի 4-ական գ սերմերի վրա լցնել 3 գ աղ, տաք ջուր: Ստացված շիլան քսել մեջքին՝ թոքերի հատվածում: Օգտակար է թոքերի բորբոքման ժամանակ:

❖ 1 թ/գ ալոեի հյութին խառնել 250 գ մեղր, 350 գ կարմիր գինի: Թոքերի բորբոքման դեպքում կիրառել քսուքի ձևով:

❖ 1 թ/գ ալոե լուծել ջրի մեջ, ավելացնել աղացած դարահալվե (столетник), որոշ ժամանակ անց թրմել: Ընդունել օրը երեք անգամ 1-ական թ/գ՝ ուտելուց 1 ժամ առաջ: Օգտակար է թոքերի բորբոքման դեպքում:

❖ Մանդարինի կեղևի վրա լցնել եռացրած ջուր, ծածկել, թողնել սարչի: Թոքերի բորբոքման ժամանակ խմել օրը 3-4 անգամ 1-ական թ/գ:

❖ Ազնվամորու տերևների եփուկն օգտակար է թոքերի հիվանդություն ունեցողներին:

❖ 8 դեղնուցը, 3 բաժակ կաթնասերը, 100 գ կակաոն լավ հարել: 400 գ կարագն ու 400 գ խոզի փորոտիքի ճարպը տաքացնել, բոլորը խառնել իրար, եռացնել այնքան, որ ստացվի խմորանման զանգված: Պետք է եռա երեք անգամից ոչ ավել: Սառեցնել, խմել օրը երեք անգամ 1-ական թ/գ: Այն բուժում է թոքերի հիվանդությունները:

## ԱՉՔԵՐԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ⦿ Անալի պանիրն օգտակար է աչքի ուռուցքին:
- ⦿ Դիճ ընկույզի միջուկը ծամել, դնել աչքի ուռուցքին:
- ⦿ Աչքի ուռուցքին ոսպի խաշուկով տաք թրջոց դնել:
- ⦿ Սեխը տրորել ու դրանով աչքի ուռուցքին թրջոց դնել:
- ⦿ Եթե աչքի մեջ կար կաթեցնեք, ցավի կանցնի:
- ⦿ Ընկույզի յուղը քսել աչքերին: Այն բուժում է ցավը, վերացնում ճպուռը:

⦿ Խնձորը եփել, տրորել, դնել աչքին: Բուժում է ցավը և ուժեղացնում տեսողությունը:

⦿ 0,5 բաժակ թարմ վարունգի կեղևին ավելացնել նույնքան եռացրած ջուր, 0,5 թ/զ կերակրի սողա և դրանով թրջոց դնել: Բուժում է աչքի ցավերը:

⦿ Նոր մորթած գառան թրը կտրել, տաք վիճակում դնել աչքերին: Այն քաշում է ցավը, մաքրում արյունը:

⦿ Դոնի թարմ տերևների հյութը քամել և օգտագործել աչքի հիվանդության դեպքում:

⦿ Կարտոֆիլը լավ լվանալ, առանց կեղևելու քերել, լցնել թանգիֆի մեջ, կապել, դնել աչքերին: Օգտակար է ցավի և այտուցվածության ժամանակ:

⦿ Սալորենու բուսախեժը լուծել ու կաթեցնել աչքերի մեջ: Այն մաքրում է աչքերի մեջ լցված արյունը:

⦿ 100 գ ծլեցրած ցորենն աղալ, խառնել բուսական յուղ կամ գազարի հյութ: Ուտել առավոտյան՝ անորի վիճակում: Բուժման կուրսը 1 ամիս է: Օգտակար է աչքի հիվանդությունների ժամանակ:

⦿ 1 բաժակ ցորենը լվանալ, խառնել 1 ճ/զ մեղր կամ շաքարավազ և այնքան գոլ ջուր, որ հազիվ ծածկի ցորենը: Պահել մութ տեղում, որ չծլի: Դատիկներն ուռելուց հետո դնել սառնարանը:

## 45- ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ

Ուտել անոթի վիճակում՝ օրական 1 ճ/գ: Երբ ցորենն սպառվի, 10 օր ընդմիջել: 2-րդ և 3-րդ բաժակ ցորենն ուտելուց հետո ևս դադար տալ: Այն բուժում է աչքի հիվանդությունները:

⦿ Բալի ծաղիկների հյութը կաթեցնել աչքերի մեջ: Օգտակար է դեղնության և արյունազեղման դեպքում:

⦿ Երիցուկի եփուկով լվանալ բորբոքված կոպերը:

⦿ Կոպերի բորբոքումը կրուժվի, եթե աչքերի մեջ կաթեցնեք խակ խաղողի հյութ:

⦿ Թանգիֆը թաթախել կաթի մեջ, 4-5 րոպե դնել աչքերին, այնուհետև դրանք ցայել սառը ջրով: Այդ թոջոցները վերացնում են բորբոքվածությունը:

⦿ Աչքի թարախային հիվանդությունների դեպքում քսել սամիրի հյութ:

⦿ Աչքի հիվանդությունների ժամանակ կրկնել 1-8-9-1-0-1-4 թվային ծածկագիրը:

⦿ Եզան աչք բույսի ծաղիկները չորացնել, խառնել աչքի դեղրին և օգտագործել: Այն ցրում է սպիտակ փառը, ուժեղացնում կոպերի մկանները:

⦿ Ընկույզի պտղակեղևի հյութը խառնել մեղրին և կաթեցնել աչքերի մեջ: Այն վերացնում է փառը:

⦿ Դղումը եփել, հյութը քամել, կաթեցնել աչքերի մեջ: Այն բուժում է դեղնախտի հետևանքով առաջացած դեղնությունը:

⦿ Կատարակտի, աչքի բորբոքման դեպքում կոպի վրա կամ էլ ներսում քսել մաքուր մեղր: Կարելի է նաև մեղրով ու թորած ջրով խառնուրդ պատրաստել ու կաթեցնել աչքերի մեջ: Մեղրն ամենաուժեղ բնական հակաբորբոքիչն է:

⦿ Դավկուրությունը կրուժվի, եթե աչքերի մեջ սոխի հյութ կաթեցներ:

⦿ 2 գազարը երկարությամբ կիսել, բուսական յուղով տապակել, ավելացնել աղ, քնջութի բոված սերմ: Ուտել եփած բրնձով: Օգտակար է հավկուրության դեպքում:

⦿ Ըստ Ամիրովլար Անասիացու, կատարակտը կրուժվի, եթե աչքերի մեջ կաթեցնեք սպիտակ սոխի հյութ:

⦿ Կատարակտի դեպքում օրական խնել 50 գ մաղաղանոսի հյութ: Ավելի արդյունավետ կլինի, եթե խառնվի որևէ այլ հյութի:

⦿ Խսնձորի գլխիկը կտրել, փոսիկ ամել, մեջը լցնել 1 թ/գ մեղր և 1 օր թողնել: Առավոտյան ու երեկոյան հեղուկից 2-ական կաթիլ կաթեցնել աչքերի մեջ: Լուծույթը սառնարանում կարելի է պահել 5-6 օր: Այս միջոցը կանխում է կատարակտի զարգացումը:

⦿ Թզենու պտուղներից ու տերևներից արտադրվող սպիտակ հյութը խառնել մեղրին և կաթեցնել աչքերի մեջ: Այն կանխում է կատարակտը:

⦿ 0,5 բաժակ մայիսյան եղինջի և 1 թ/գ մայիսյան հովտաշուշանի ծաղիկների վրա լցնել 1 բաժակ ջուր, խառնել, 8-9 օր մութ տեղում թրմել: Յավելել 1/2 թ/գ կերակրի սողա: Գլաուկոմայի ժամանակ ցավող տեղերին այս թուրմով թրջոցներ դնել:

⦿ Կոնյունկտիվիտի (շաղկապենու բորբոքում) դեպքում տարին երկու անգամ 1 ամիս շարունակ ամեն առավոտ խմել 1 բաժակ գազարի հյութ:

⦿ Կոնյունկտիվիտի ժամանակ օգտակար է մաղաղանոսի և գազարի հյութերի խառնուրդը (1:3): Խմել օրը երեք անգամ 0,5-ական բաժակ՝ ուտելուց առաջ:

⦿ 2 ձվի սպիտակուցը հարել, ավելացնել 0,5 բաժակ եռացրած ու սառեցրած ջուր, 30-40 րոպե պահել տաք տեղում, ապա քննելուց 10-15 րոպե առաջ քսել աչքերի ցավող մասին: Կիրառել կոնյունկտիվիտի դեպքում:

⦿ 2թ/գ երիցուկի ծաղիկների վրա լցնել 1/4 բաժակ եռացրած ջուր, ծածկել, 5 րոպեից քամել: Կոնյունկտիվիտի ժամանակ դրանով լվանալ աչքերը կամ էլ թրջոց դնել:

### **Տեսողության բարելավման համար խորհուրդ է տրվում՝**

⦿ Ծիրանը, գազարը բարելավում են տեսողությունը, իսկ դառը նուշը, շաղգամը, կծոխուրը, գարեջուրը սրում են այն:

⦿ Սերկակիլի ծաղիկների հյութը քամել, կաթեցնել աչքերի մեջ:

⦿ Դանդուռը, ծաղկակաղամբը, կաղամբը, համենը, սամիթը, հազարը, սիստորը թուլացնում են տեսողությունը:

⦿ Եթե աչքերը լվանաք մեզով, տեսողությունը կսրվի: Այն նաև մաքրում ու բուժում է աչքերը:

## **47- ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ**

⦿ Երկնագույնին նայելը դրական ազդեցություն է ունենում տեսողության վրա:

⦿ Սոխի հյութին մեղր խառնել և կաթեցնել աչքերի մեջ: Բուժում է բույլ տեսողությունը, նոր սկսվող կուրությունը:

⦿ Ղանձլամերը բարելավում է տեսողությունը:

⦿ Տեսողության լավացման և հոտառության ուժեղացման համար ամեն առավոտ լվանալ հայմորյան խոռոչները: 0,5 բաժակ գոլ ջրի մեջ լցնել 1 թ/գ աղ, մի քանցքը փակելով՝ մյուսով ջուրը ներս քաշել ու կրկին դուրս թափել: Դետո փակել մյուս քանցքը ու կրկնել նույն գործողությունը:

⦿ Աչքերի խնձորակները պտտել վերև-ներքև: Վարժությունը կրկնել երեք անգամ, այնուհետև աչքերը փակել:

⦿ Նայել վերև, ապա՝ առաջ, հետո՝ ներքև, ապա՝ առաջ: Գործողությունը կրկնել երեք անգամ, որից հետո աչքերը փակել:

⦿ Նայել ծախ, ապա՝ աջ, կրկնել երեք անգամ, փակել աչքերը:

⦿ Նայել ծախ, ապա՝ առաջ, հետո՝ աջ, ապա՝ առաջ: Գործողությունը կրկնել երեք անգամ, որից հետո աչքերը փակել:

⦿ Շեղակի նայել վերև՝ աջ անկյուն, հետո՝ ներքև՝ ծախ անկյուն: Կրկնել երեք անգամ, այնուհետև շեղակի նայել վերև՝ ծախ անկյուն, ապա՝ ներքև՝ աջ անկյուն: Կրկնել երեք անգամ:

⦿ Ակնախնճորներով կատարել շրջանաձև շարժումներ դեպի աջ, աչքերը փակել և նույնը կրկնել հակառակ ուղղությամբ, աչքերը փակել:

**Աչքերի այտուցների, հոգնածության դեպքում խորհուրդ է տրվում՝**

⦿ Կատվախոտից եփուկ պատրաստել, կոպերի հոգնածության դեպքում դրանով թրոց դնել:

⦿ Եթե ամեն օր թեյի թուրմով լվանաք աչքերը, դրանք չեն կարմրի, իսկ հոգնածությունը կվերանա:

⦿ Աչքերի տակի այտուցները կվերանան և աչքերը կթարմանան, եթե դրանց վրա դմեք վարունգի շերտիկներ:

⦿ Կարտոֆիլը լավ լվանալ, քերել, լցնել թանգիֆի մեջ և դնել աչքերին: Կարելի է նաև 2 թ/գ քերած կարտոֆիլին խառնել 2-ական թ/գ կաթ և այսուղ: 10-15 րոպե անց հոգնածությունը կանցնի:

⦿ Սաղադանոսի թարմ տերևները մանր կտրատել, դնել աչքերի տակի պարկերի և ուռած կոպերի վրա, բամբակով ծածկել՝ թողնելով 10-15 րոպե:

⦿ 2 գդալ ձիածետի վրա լցնել 2 բաժակ ջուր, կես ժամ եռացնել ու լվանալ աչքերը: Շատ է օգնում աչքերի հոգնածության դեպքում:

⦿ Սաղադանոսի մանր կտրատած 1 թ/գ տերևին ու ցողունին ավելացնել 2 թ/գ թթվասեր, ստացված խյուսը 20-30 րոպե դնել ուռած կոպերի և աչքերի տակի պարկերի վրա: Ապա սառը ջրով լվանալ, բառով քսել: Այս միջոցը բարելավում է արյան շրջանառությունը:

⦿ 1 թ/գ եղեսպակի վրա լցնել 100 մլ ջուր, եռացնել ու բերանը փակ վիճակում 10 րոպե թողնել: Տաք թուրմով աչքերին թրջոց դնել: Թուրմի մյուս մասը սառնարանում սառեցնել ու տաք թրջոցը փոխսարհնել սառով: 10 րոպեն մեկ տաք և սառը թրջոցները հաջորդաբար փոխել: Աչքերի տակի պարկերը կանհետանան:

⦿ 1-ական ճ/գ երիցուկի և լորենու ծաղիկների վրա 1 բաժակ ջուր լցնել, եռացնել: Սրանով լվանալ աչքերը կամ թրջոց դնել: Այն պահպանում է աչքերի փայլը:

⦿ Աչքերի տակի այսուցները վերացնելու և երիկամների աշխատանքը խթանելու համար 1 ճ/գ չորացրած ու մանրած կանաչ լոբու վրա լցնել 400 մլ ջուր, ծածկել և տաք տեղում 1 ժամ թրմել: Խնել օրը 3-4 անգամ 1/4 բաժակ: Բուժման կուրսը 1 ամիս է:

⦿ Աչքերի հոգնածության դեպքում քթարմատը շրջանաձև շարժումներով մերսել:

⦿ Եթե աչքերը հոգնել են, մերսել քրի եզրի լորձաբաղանքի հատվածը:

⦿ Մի քանի րոպե մերսելով ականջները՝ կմեծացնեք ձեր եներգիան ու աչքերի փայլը:

## ՄՐՄԱԾՈՒԹՅՈՒՆ

❖ 200 գ օշինդոք 0,5 լ օղու մեջ 24 ժամ թրմել: Ընդունել օրը երեք անգամ՝ 1-ական ճ/գ:

❖ Օգտակար է մորու մուրաբան, նրա տերևներից և ցողունից պատրաստված թուրմը:

❖ Մասուրով թեյ պատրաստել ու մեղրով խմել:

❖ 2 ճ/գ մեղրը տաք կաթով օրը 2-3 անգամ խմել:

❖ Օրը երեք անգամ խմել 1-ական ճ/գ բազուկի հյութ:

❖ Շնչել խաշած կարտոֆիլի գոլորշին:

❖ Առյուծագին, եղերդակի արմատները (1:1) եռացրած ջրով եփել, թրմել: Խմել օրը երեք անգամ 0,5 բաժակ:

❖ Աղացած սև պղպեղը ձիթայուղով եփել, քսել մարմճին:

❖ Ուսպը և սպասն օգտակար են մրսածության դեպքում:

❖ 1 բաժակ մասուրի հյութին խառել 1 բաժակ թունդ սուրճ, 1 լիքը թ/գ մեղր, մի կտոր կիտրոն, մի քիչ կոնյակ: Խմել օրը երեք անգամ 1-ական ճ/գ՝ ուտելուց առաջ:

❖ Կեղևով եփած կարտոֆիլը տաք-տաք տրորել, ավելաց-նել սպիրտ կամ օղի, փաթաթել կտորով, դնել կրծքավանդակին ու հիվանդին լավ ծածկել:

❖ Մանամեխի փոշին լցնել գուլպաների մեջ և հագնել:

❖ Բրոյա կտորը թրցել քացախի, պրովանսյան (ձիթապտղի) յուղի և քաֆուրի լուծույթով ու գիշերը դնել կրծքին, իսկ կզակին դնել քերած ծովաբողկից թրջոց: Բրոյա երկար գուլպաները լցնել տաք մղեղով և հացնել հիվանդին:

❖ 0,5-ական բաժակ սև հաղարջի գինին ու տաք ջուրը խառնել և մեկ շնչով խմել: Քրտնելուց հետո գործողությունը կրկնել:

❖ Խմել տանձի տերևներից պատրաստված եփուկ:

❖ Շականդեղի թարմ հյութին ավելացնել մեղր (1:1): Օրական 6-4 անգամ խմել 1-ական սուրճի գավաթ:

❖ 1 բաժակ տաք թեյի մեջ լցնել 1 թ/գ մորու մուրաբա, մի պտղունց կարմիր պղպեղ, 1-2 ճ/գ օղի և խմել: Կամ էլ թեյի մեջ լուծել 1-ական ճ/գ մեղր և կոնյակ: Մանր կումերով ընպել:



## Օ ԳՏԱԿԱՐ Է ԻՍԱԿԱԼ



### Օրգանիզմի մաքրման համար խորհուրդ է տրվում՝

✿ Զիաձետը չորացնել, մանր կտրատել, թրմել և խմել օրը 3 անգամ 1/4 բաժակ:

✿ 1 ճ/գ արևածաղկի ձեթը 20-30 րոպե պահել բերանում, ապա բերանից թափել ու ողողում անել: Խորհուրդ է տրվում գործողությունը կատարել առավոտյան կամ էլ՝ քնելուց առաջ:

✿ Ավելուկի վրա գինի լցնել, եփել և խմել:

✿ Հասած թուզը մաքրում է լյարդը, երիկամները, փայծաղը, թեթևացնում է կուրծքը:

✿ Երիկամ ուտելով՝ օրգանիզմից դուրս կմղեք ոչ պիտանի նյութերը:

✿ Ծորենին մաքրում է ողջ աղեստամոքսային համակարգը:

✿ Խմել ճակնդեղի հյութ՝ 1 թ/գ-ից հասցնելով 100 գ-ի:

✿ Սոխն օրգանիզմից հեռացնում է թափոնները, օրգանիզմը մաքրում բոլոր տեսակի բորբոքումներից:

✿ Ղանձլամերը լիովին մաքրում է խարամներից, թույներից:

✿ Խմել նռան գինի:

✿ Ծիրանն օրգանիզմը մաքրում է թափոններից:

✿ Թանը, խնձորը մաքրում են թույներից:

✿ 300 գ աղացած սխտորին ավելացնել 20 կիտրոնի հյութ: Անոթի վիճակում խմել 1 ճ/գ՝ օրը 2-3 անգամ:

✿ Առանց աղի և յուղի եփված բրինձն օրգանիզմը մաքրում է խարամներից:

✿ 2 ճ/գ արևկուրիկի վրա լցնել եռացրած ջուր, գիշերը թերմոսում թրմել: Խմել օրը երեք անգամ ուտելուց կես ժամ առաջ՝ 1/3 բաժակ: Կուրսը 2 ամիս է:

✿ Ամիսը մեկ անգամ խմել միայն ջուր, որին կարելի է խառնել մի քանի կաթիլ կիտրոնի կամ նարնջի հյութ:

## ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԿԱՏԱԾ

Միլիոնավոր մարդիկ գարնան գալուստը դիմավորում են արցունքներն աչքերին, ընդ որում լալիս են ոչ թե ուրախությունից, այլ՝ ալերգիայից: Բավական է, որ օդում հայտնվեն ծաղկող բուսականության փոշեհատիկները, և այդ տիհած հիվանդությամբ տառապողների համար սկսվում են տանջալից օրերը:

Յիշվանդությունն անվանում են գարնանային կատառ: Դրանով ախտահարված հիվանդներն անընդհատ ուզում են փոշտալ, աչքերը կարմրում են, արցունքութվում, այտուցվում, դեմքը ևս կարմրում է: Իսկ եթե այդ փոշեհատիկները կերակրի միջոցով ներթափանցում են օրգանիզմ, սկսվում է սրտխառնոց, փսխում, լուծ, որովայնում զգացվում են սուր ցավեր:

Գարնանային կատառը միայն թաշկինակով չի սահմանափակվում: Այն կարող է պատճառել ավելի տիհած ցավեր: Յիշվանդությունը 2-3 տարի հետո կարող է զարգանալ և վերածվել փոշեհատիկային ասթմայի, որի հետևանքով տուժում է մարդու նյարդային համակարգը: Այս հիվանդությամբ տառապողները լինում են նյարդային, շուտ են հոգնում, սուր գլխացավեր են ունենում: Պատահում են նաև առավել վտանգավոր դեպքեր, որոնց ժամանակ վնասվում է հիվանդների տեսողությունը կամ լսողությունը, խանգարվում է սրտամկանի աշխատանքը:

Գարնանային կատառն առավել հաճախ ի հայտ է գալիս քաղաքաբնակների մոտ: Իսկ թե ինչու են սեզոնային այս ախտով ավելի շատ տառապում բարձրագույն կրթությամբ ու լավ վաստակող մարդիկ, առայժմ հայտնի չեն: Կատառն առաջանում է բոլոր ծաղկող բույսերից, և ոչ զգիտի, թե ուն մոտ հատկապես որ ծաղկից այն կառաջանա: Այն հանգամանքը, թե այդ ախտը «շրջանցել է» ձեզ, դեռևս երաշխիք չէ, որ հաջորդ գարնանը «չի այցելելու»: Փոշեհատիկային ալերգիայից խուսափելը բավականին դժվար է, քանի որ մենք ապրում ենք բուսական աշխարհի հարևանությամբ, և մարդը չի կարող իրեն պաշտպանված զգալ այդ չարիքից:

## ԱԼԵՐ ԳԻԱ

Ալերգիան լինում է սրբնթաց և դանդաղեցված: Սրբնթացի դեպքում ռեակցիան սկսվում է մի քանի վայրկյանից, իսկ երկրորդի ժամանակ՝ 6-14 օր անց: Ամենածանր տեսակն անաֆիլակտիկ շոկն է, որը զարգանում է բութեների ընթացքում: Ալերգիան առաջանում է դեղերից, կաթից, ձվից, ելակից, մեղրից, խեցգետնից:

**Ախտանիշներն են՝** գլխացավը, գլխապտույտը, թուլությունը, քորը, սրտխառնոցը, փսխումը, սարսուռը, ցավերը որովայնում, գոտկատեղում, կրծքավանդակում: Բերանում և քթի խոռոչում լինում է այրոցի գացում:

### **Ալերգիայի դեպքում խորհուրդ է տրվում՝**

❖ Ախտորը ճզմել, լցնել թանգիֆի մեջ, կապել, քսել ողնաշարի աջ և ձախ կողմերին (ողնաշարից 1 սմ հեռու)՝ վերից վար:

❖ Թարմ ձուն եփել, կեղևը թաղանթից մաքրել, փոշի դարձել, մի քանի կաթիլ կիտրոնի հյութ ավելացնել ու խմել:

❖ Փոշուց, հավսիթից, մրգերից առաջացող ալերգիայի ժամանակ կեչու փայտն այրել և օրական 1 ճ/գ ջրով խմել:

❖ Փոշուց, ջրից առաջացող ալերգիայի դեպքում 1 գլուխս սուր մաքրել, մանր կտրատել, լցնել թանգիֆի մեջ, կապել և 20 րոպեով դմել քթի տակ այնպես, որ համընկնի քթանցքերին:

❖ Օգտակար են տուլտի, եռաբաժան կատվալեզվի, մատուտակի թուրմը կամ եփուվը:

❖ Ամեն առավոտ խմել 1 ճ/գ կաղամբի թարմ հյութ: Որպեսզի հյութը չվնասի, նախապես ջուր ընպել:

❖ 5-6 կարտոֆիլը լավ լվանալ, կեղևով եփել, այդ նույն ջրով խյուս պատրաստել և ուտել: Բուժման կուրսը 25-30 օր է:

❖ Ամեն առավոտ սառը ջրով խմել ակտիվացված ածուխ (յուրաքանչյուր 10 կգ-ին՝ 1 հար): Բուժման կուրսը 2-3 ամիս է:

## ԲՈՒՅՐԵՐՆ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ ԵՆ ՊԱՐ ԳԵՎՈՒՄ



Բույրերի միջոցով բուժումը ոչ ավանդական բժշկության արդյունավետորեն զարգացող ուղղություններից մեկն է, որը լայն կիրառություն է գտել հատկապես շնորհիվ այն բանի, որ գործածվող եթերայուղերը չեն ունենում այնպիսի կողմնակի ազդեցություններ, ինչպիսիք բնորոշ են ժամանակակից դեղամիջոցներին: ճիշտ է, բույրերի միջոցով հնարավոր է բուժել ոչ բոլոր ախտերը, այնուհանդերձ անվիճելի է նրանց արդյունավետությունը որոշ հիվանդությունների բուժման գործում:

Գոյություն ունեն եթերայուղերի գործածության տարրեր թերապևտիկ միջոցներ, որոնք պայմանականորեն կարելի է բաժանել երեք հիմնական խմբի: Դրանք են՝ ինհայացիան, ներքին և արտաքին ընդունումը: Եթերայուղերը բուրավետ, ցնդող տարրեր են, որոնք պարունակվում են բույսերի տարրեր մասերում՝ ծաղիկների, տերևների, արմատների, պտուղների մեջ: Դայտնի են ավելի քան 2000 տեսակ եթերայուղային բույսեր, որոնք բուժիչ հատկությունների շնորհիվ իրենց ուրույն տեղն են գրավում հիվանդությունների կանխարգելման և բուժման գործում: Եթերայուղերին բնորոշ են հակարորդոքային, հակամանրէային, հակավիրուսային, հակածիճվային հատկություններ:

Երիցուկի, հասմիկի, խորդենու եթերայուղերը, որոնք օժված են հանգստացնող հատկությամբ, բարերար ազդեցություն են ունենում սրտանորային և կենտրոնական նյարդային համակարգերի վրա, օգնում են ազատվել սրբեսներից, գրգռվածությունից, կարգավորում են քունը, բարձրացնում աշխատունակությունը: Եղեսպակի, էվկալիպտի, անիսոնի, սոճու, բրգաձև սոճու եթերայուղերը գործածվում են բրոնխիսի համալիր բուժման ժամանակ: Ունի այն բույրը խթանում է ուղեղի գործունեությունը և

վերացնում է անքնությունը: Օգտակար է նաև միգրենի դեպքում, իսկ ռեհանի և նարդոսի բույրերը բարձրացնում են ինունիտետը: Սամիթը, անխոնը նպաստում են ստամոքսահյութի արտադրությանը, մարսողությանը, օգնում են ազատվել ավելորդ քաշից: Սուսամբարն ունի ցավազրկող հատկություն, կարգավորում է հորմոնալ ֆոնը, ճարպակալման դեպքում խթանում է նյութափոխանակությունը: Արևքուրիկը պարունակում է դրոֆիլային տարրեր, խեժեր, որոնք էլ մեծացնում են մաշկի առաջգականությունը: Կարելի է արևքուրիկի հյութը քամել և մի քանի կարիլ ավելացնել գիշերային քսուրին: Վարդի եթերայուղի և սաղմնային ցորենի յուղի խառնուրդն օժտված է ճարպերն այրելու հզորագույն հատկությամբ: Բացի դրանից, այն ցելյուլիտի թշնամին է:

Խնկի բույրը նպաստում է ինտելեկտի և մարդու հոգեբանական հնարավորությունների զարգացմանը: Ցանկացած նտավոր աշխատանք ավելի արդյունավետ կլինի, եթե այդ ընթացքում շնչեք ծխացող խնկի հոտը: Վերջինս նպաստում է նաև մեղիտացիային, զարգացնում է բնազդը: Հայտնի է նաև, որ ծխախոտի բույրը ևս դրական է ազդում մարդու մտավոր ունակությունների վրա:

Նարնջի բույրն իշեցնում է զարկերակային արյան ճնշումը, բարձրացնում է տրամադրությունը, մեծացնում աշխատունակությունը: Կիտրոնի հոտն օգնում է թունավորվածին: Բուրավետ խնձորի բույրը խթանում է ուղեղի աշխատանքը, բարերար ազդեցություն է ունենում սրտի վրա: Թարմ լավաշի հոտը ևս առողջարար է: Այն հրաշալի է ազդում բոլոր հիվանդների վրա:

Եթերայուղերով կարելի է մերսում կատարել, շնչել նրանց հոտը, ավելացնել լոգանքի ջրին: Եթերայուղերով հարուստ դեղաբույսերով (անանուխ, նարդոս, եղեսպակ, երիցուկ, հազարաթերթիկ, մեղվախոտ, հազրեվարդ) լոգանքները լայնացնում են մաշկի արյունատար անոթները, լավացնում են արյան շրջանառությունը: Բույրերի միջոցով հնարավոր է անգամ կարգավորել ախորժակը: Բուժիչ հատկություններով օժտված եթերայուղերը խորհուրդ չի տրվում մշտապես գործածել: Զարաշահման դեպքում դրանց բուժական արդյունավետությունը նվազում է: Որևէ յուղ առաջին անգամ օգտագործելիս հետևեք մաշկի ռեակցիային ու ձեր ինքնազգացողությանը, իսկ տարատեսակ եթերայուղեր գործածելիս արեք մեկամսյա ընդմիջումներ:

## ՃԱՐՊԱԿԱԼՈՒՄ



Չափից ավելի ուտելը, օրգանիզմում ճարպերի դանդաղ այրումը, ժառանգական նախահակվածությունը, վեգետատիվ նյարդային համակարգը և մի շարք այլ գործոններ հանգեցնում են ճարպակալման: Որպեսզի պարզեց, ունեք արդյոք ճարպակալում, թե՝ ոչ, ձեր քաշը բաժանեք հասակի քառակուսու վրա: Եթե ձեր ստացած ցուցանիշը 20 և ավելի է, ուրեմն դուք ճարպակալում ունեք: Օրինակ՝ 70 կգ և 155 սմ հասակ ունեցողի համար այդ ցուցանիշը հավասար կլինի 22-ի ( $70:310=0,22$ ):

Մարմնի զանգվածը որոշում են առավոտյան, անոթի վիճակում: Իսկ որքա՞ն պետք է լինի առողջ մարդու զանգվածը: Գոյություն ունեն մարմնի զանգվածի հաշվարկման տարբեր բանաձևեր: Դանաձայն Բրոկի բանաձևի, հասակի թվից հանելով 100՝ կստանաք կանոնավոր քաշի ցուցանիշը: Օրինակ՝ 160 սմ հասակ ունեցող մարդու նորմալ քաշը 60 կգ է: Այս բանաձևը ոչ միշտ է կիրառելի: 165-180 սմ հասակի դեպքում հարկավոր է հանել 105: Ըստ Բրունքարդի բանաձևի, հասակը բազմապատկում են կրծքավանդակի ծավալով և բաժանում 240-ի: Օրինակ՝ 170 սմ հասակ և 90 սմ կրծքավանդակի ծավալ ունեցող մարդու մարմնի զանգվածը պիտի լինի 63 կգ 750 գ:

Ցուրաքանչյուր մարդու քաշի չափավորությունն անհատական է՝ կախված կազմվածքից: Մեծ նշանակություն ունի՝ մարդու բարձրահասակ է, թե՝ ցածրահասակ, ձեռքերը երկար են, թե՝ կարճ, լայնաթիկունք է, թե՝ ոչ: Եթե մարմնի զանգվածը նորմայից ավել է 10-15 %-ով, ապա դա չափի սահմաններում է: 15-25 %-ով ավելանալիս այն համարվում է գիրություն, իսկ 25 %-ից բարձրի դեպքում՝ ճարպակալում: Եթե ցանկանում եք չգիրանալ, պետք է կարողանաք քաղցի զգացումը տարբերել ախորժակից: Նստակյաց կյանքով ապրող կանանց օրգանիզմն օրական 2200 կալորիայի պահանջ ունի: Չափից շատ կալորիա օգտագործելու հետևանքով մարդը գիրանում է:

Գեր մարդիկ իրենց տարիքից մեծ են երևում: Գիրությունը, տգեղացնելուց զատ, նաև հիվանդություն է: Ըստ համաշխարհային վիճակագրության, եթե մարդու քաշը նորմայից բարձր է 20 %-ով, ապա նրա կյանքը կրծատվում է 10 տարով: Նարպակալման պատճառով սրտամկանը չափից ավելի լարված է աշխատում, հետևապես գեր մարդիկ հաճախ տառապում են շնչահեղձությամբ, շնչարգելությամբ, սրտխսիոցով, ոտքերի այտուցով: Նարպակալումը հանգեցնում է ինֆարկտի, հիպերտոնիայի, կարծրախստի, շաքարախստի: Գեր մարդկանց ծնկները հաճախ ցավում են, նրանք տառապում են երակների լայնացմամբ, ողնաշարի և հոդերի հիվանդություններով:

Նրանք, ովքեր ցանկանում են ազատվել ավելորդ քաշից, պետք է բանջարեղեն շատ օգտագործեն (բացի օվլայով հարուստ կարտոֆիլից): Թեև դրանք ունեն ցածր կալորիականություն, այնուհանդերձ հագեցնում են քաղցր, օրգանիզմից դուրս են մղում խոլեստերինը՝ կանխելով աթերոսկլերոզի առաջացումը: Խորհուրդ է տրվում օրական ուտել 600-800 գ տարբեր տեսակի բանջարեղեն: Անեն օր կարելի է ուտել կաղամբով աղցան՝ վրան ավելացնելով գազար, խնձոր: Հում կաղամբը կանխում է օրգանիզմում ճարպերի կուտակումը:

Գերերին շատ օգտակար են տարբեր տեսակի մրգերը, բացի գյուկոզայով հարուստ խաղողից, թզից, աղամաթզից:

Քարկավոր է նվազեցնել ցանկացած տեսակի քաղցրավենիքների քանակը՝ փոխարենն ուտելով թարմ մրգեր: Գիրության դեմ պայքարելու արդյունավետ միջոց է բուսական յուղը: Զիթապտղի, արևածաղկի, եգիպտացորենի յուղերը պարունակում են չհագեցած ճարպաթթուներ, որոնք կարգավորում են ճարպային փոխանակությունը, այսինքն՝ ակտիվացնում են օրգանիզմի կողմից ճարպերի յուրացնան գործընթացը: Օգտակար է չզտված ձեթը, սակայն այն անհրաժեշտ է չափավոր օգտագործել: Օրական 2 ճ/գ-ը բավկան է, քանի որ նրա կալորիականությունը բարձր է: Տարեցներին խորհուրդ չի տրվում բուսական յուղ շատ օգտագործել: չհագեցած թթուները նպաստում են այնպիսի նյութերի առաջացմանը, որոնք արագացնում են ծերացման գործընթացը: Գիրության դեմ հիանալի միջոց է անյուղ կաթնաշոռը, բայց այն

ևս չի կարելի չարաշահել, որովհետև առաջացնում է երիկամային քարեր: Օրվա կերակրաբաժնում անպայման պիտի լինեն սպիտակուցներով հարուստ մթերքներ՝ միս, ձու, ձուկ, կաթ, կաթնաշոռ: Միաը կամ ձուկը (օրական՝ 150-200 գ) նախընտրելի է ուտել խաշած վիճակում: Օրվա կերակրացանկում պարտադիր են մածունը (500 գ), կարագը (10 գ), 2-3 կտոր սև հացը: Անհրաժեշտ է հնարավորինս քիչ օգտագործել ածխացրեր պարունակող մթերքներ: Այս ամենից բացի, գիրության դեմ ամենալավ «դեղամիջոցը» ֆիզիկական ակտիվությունն է:

**Կալորիաները կրծատելու համար հարկավոր է սննդից բացառել բարձր կալորիականությամբ մթերքները՝**

- ◆ տավարի յուղոտ միսը
- ◆ խոզի և ոչխարի միսը
- ◆ տավարի գլուխը, տոտիկները, ուլեղը, սիրտը, լարու, երիկամները
  - ◆ թօչնամսի յուղոտ տեսակները՝ բաղի և սագի միսը
  - ◆ պանրի յուղոտ տեսակները
  - ◆ պաղպաղակը
  - ◆ սպիտակ հացը
  - ◆ պուդինգը
  - ◆ տորթը, բիսկվիթը
  - ◆ կաթնահունց, յուղահունց թխվածքները
  - ◆ թթվասերով ու կարագով պատրաստված կրեմները
  - ◆ չիպսերը
  - ◆ երշիկը, նրբերշիկը, սարդելկան, պաշտետը, կրծքամիսը
  - ◆ կենդանական ճարպերը, սերուցքային կարագը, ճրագուն, արմավենու և կոկոսի կարագը
  - ◆ շոկոլադը, կակաոն, ցանկացած շոկոլադային խմիչքները
  - ◆ անքաշ կաթը, յուղոտ կաթնամթերքները՝ թթվեցրած կաթը, թթվասերը և այլն
  - ◆ մայոնեզը

- ◆ թանձր կերակրահյութերը՝ սոուսները, որոնց բաղադրության մեջ կա թթվասեր
- ◆ աղով բոված ընկույզը, պնդուկը

**Փոխարենը սննդակարգում պետք է ներառել այնպիսի մթերքներ, որոնք կարգավորում են ծարպափոխանակությունը և նպաստում օրգանիզմից ավելորդ ծարպերի դուրսերմանը: Դրանք են՝**

- ◆ բուսական յուղը՝ արևածաղկի, ծիրապտոի, եգիպտացորենի, սոյայի
- ◆ ծովային ձկնատեսակները՝ ծովատառեխսը, թյունոսը, թյունիկը, սարդինան, սաղմոնը, տափակաձուկը, ինչպես նաև՝ ծովամթերքները
  - ◆ վարսակաձավարը, սև հացը
  - ◆ մսի ու թռչնամսի ոչ յուղոտ տեսակները՝ հորթի, ճագարի, հնդկահավի, հավի միսը, որսի թռչնամսիսը
  - ◆ թարմ և սառեցրած մրգերը, բանջարեղենը, կանաչեղենը
  - ◆ սոյան, ընդեղենը (լոբի, ոլոռ, բակլա)
  - ◆ ցածր կալորիականությամբ խմիչքները՝ հյութերն ու ըմպելիքները

Սննդակարգի այսպիսի փոփոխությունը բոլորովին էլ ձեզ չի մատնի քաղցի տառապանքներին, քանի որ այս կերպ կրծատվում է ոչ թե սննդի քանակը, այլ՝ կալորիականությունը:

**Նյութափոխանակությունը կարգավորելու և ծարպակալման դեմ պայքարելու համար խորհուրդ է տրվում՝**

**✿ 1 թ/գ չորացրած մասուրը մանրել, հավելել 250 մլ եռացրած ջուր և էմալապատ կաթսայում մարմանդ կրակի վրա 10 րոպե եփել: Փարաթել ծածկոցով, 24 ժամ թրմել, քամել, ավելացնել 1 լ մեղր: Խմել օրը 3 անգամ 1-ական ծ/գ՝ ուտելուց 15-20 րոպե առաջ: Այն արագացնում է նյութափոխանակությունը:**

**✿ 20-ական գ ուրցի ցողունը, թուրինջախոտի տերևները, 40**

գ մորու տերևները խառնել, 1 ճ/գ խառնուրդի վրա լցնել 1 բաժակ եռացրած ջուր, սառեցնել, քամել: Խմել օրը 1 բաժակ՝ ուտելուց առաջ: Այն խթանում է նյութափոխանակությունը:

❖ Լորին, խաղողի հյութը, սուսամբարը կարգավորում են նյութափոխանակությունը և պայքարում ճարպակալման դեմ:

❖ Նյութափոխանակության կարգավորման համար ամեն առավոտ կում-կում խմել 1 բաժակ գոլ ջուր:

❖ 1 ճ/գ ալոեի հյութին ավելացնել 250 գ մեղր, 350 գ կարմիր գինի: Օգտագործել օրը երեք անգամ 1-ական ճ/գ՝ ուտելուց 30 րոպե առաջ: Կարգավորում է նյութափոխանակությունը:

❖ Բալի մեջ պարունակվող պեկտինները և քջանյութը խթանում են մարսողությունն ու լավացնում օրգանիզմի նյութափոխանակությունը: Նրանք, ովքեր ուզում են գեղեցիկ կազմվածք սունենալ, քնելուց 2 ժամ առաջ պետք է ուտեն կես բաժակ հասած բալ: Աղիքները կաշխատեն «ժամացույցի» նման:

❖ Ախորժակը կփակվի, եթե մերսեք ականջի եռանկյունաձև կրծիկը, որը գտնվում է դեմքին մոտ:

❖ 1 շաբաթ շարունակ խմել ծյունաջրին խառնած սառույց: Այն փակում է ախորժակը:

❖ Գազարը, թուրինջն այրում են ճարպերը:

❖ Ըստ Ամիրովվաթ Ամասիացու գեղը կնիհարի, եթե քնի ընկուզենու հովին:

❖ Լավ ուտելուց առաջ հարկավոր է խմել կիտրոնաջուր: Այն լավացնում է մարսողությունն ու թույլ չի տալիս գիրանալ:

❖ Եթե ցանկանում եք նիհարել, 7 օր շարունակ կերեք թերխաշ կամ թրջած հնդկածավար: Կերեք այնքան, որքան կարող եք, սակայն չի կարելի ավելացնել աղ, յուղ կամ որևէ կերակրահյութ: Թույլատրվում է խմել սուրճ, թեյ կամ որևէ այլ հեղուկ:

❖ Յոգայում հանձնարարվում է ամեն սեղոնի սկզբում կատարել թերնաթափում: Առաջին օրը պետք է խմել միայն ջուր, երեկոյան հոգնա անել: Երկրորդ օրը խմել մի տեսակի մրգահյութ, օրինակ՝ ցիտրուսային (կիտրոնի, նարնջի, թուրինջի, մանդարինի), կորիզավոր (բալի, կեռասի), հունդավոր (տանձի, խնձորի),

հատապտղային (ելակի, մորու, մոշի, հաղարջի): Երրորդ օրն ուտել միատեսակ մրգեր: Շաբաթվա մնացած 4 օրերին ուտել մրգեր, բանջարեղեն, ընկույզ, նուշ, մեղր:

❖ Բուլղարացի հայտնի բուժարար Պ. Ղիմկովն առաջարկում է երիտասարդացնող դիետա, որի համար հարկավոր է թարմ գազարը քերել, խառնել մեղր, կիտրոնի հյութ և որևէ միրզ: Երեք օր անընդմեջ օրը երեք անգամ ուտել միայն այս խյուսը: Չափաքանակը կախված է ձեր ցանկությունից: Չորրորդ օրն ուտել նաև տապակած կարտոֆիլ կամ կարտոֆիլի խյուս, հաց, խնձոր, իսկ հիմքերորդ օրվանից անցնել սովորական սննդակարգին:

❖ Շաբաթը 1 անգամ կատարել օրգանիզմի բեռնաթափում: Խնձորային բեռնաթափման ժամանակ 3 ժամը մեկ ուտել 300 գ խնձոր (օրը 5-6 անգամ): Վարունգային դիետայի ընթացքում օրը 5-6 անգամ ուտել 1,5 կգ թարմ վարունգ և 1 հատ ծու՝ առանց աղի: Զմերուկային բեռնաթափման դեպքում օրը 6 անգամ ուտել 300-ական գրամ ձմերուկ, իսկ մածնայինի դեպքում 3 ժամը մեկ խմել 1,5 լ մածուն:

❖ Եթե ցանկանում եք նիհարել, ապա 1 շաբաթ շարունակ օրական կերեք 2 նարինջ և 3 պինդ խաշած ծու: Երկրորդ, երրորդ և հետագա շաբաթների ընթացքում այս ամենին հավելեք նաև հում բանջարեղեն ու մրգեր:

❖ Օրը երեք անգամ՝ ճաշելուց առաջ, ուտել 0,5 բաժակ մորի: ճապոնական այս միջոցը նպաստում է նիհարելուն:

❖ Եթե առավտոյան ախտրժակ չունեք, կերեք մի քիչ ընկույզ, 1 խնձոր, ընպեր 1 բաժակ հյութ: 2 ժամից կարող եք նախաճաշել:

❖ Մեծ ուշադրություն դարձրեք բանջարեղենին՝ հիշելով, որ հում բանջարեղենը եփվածից ավելի օգտակար է, իսկ եփվածը՝ տապակածից:

❖ Մի' սահմանափակեք հեղուկների գործածությունը:

❖ Աշխատեք ուտել նույն ժամին, որովհետև սննդի անկանոն ընդունումը վատացնում է աղեստամոքսային ուղու աշխատանքը՝ նպաստելով տարաբնույթ հիվանդությունների առաջացմանը: Առողջ մեծահասակներին խորհուրդ է տրվում սնվել օրը 3-4 անգամ, իսկ որոշ հիվանդությունների ժամանակ՝ 5-6 անգամ:

❖ Կերեք հաճախակի, բայց քիչ՝ օրվա սննդաբաժինը բաժանելով 5 մասի: Սննդի ընդուննան միջև ընկած ժամանակահատվածում կերեք միրգ կամ բանջարեղեն, հրաժարվեք տարատեսակ բուտերբողմերից, համբուրգերներից և նմանատիպ բարձր կալորիականությանը մթերքներից:

❖ Կերեք դանդաղ՝ սնունդը երկար ժամանակ մանրակրկիտ ծամելով: Դա լավացնում է ստամոքսահյութի արտադրությունը: Բացի այդ, մարդը հագենում է և չափից ավելի չի ուտում:

❖ Զնելուց առաջ շատ մի' կերեք, իսկ ժամը 20-ից հետո ցամկալի է օրգանիզմն ընդհանրապես չժամրաբեռնել սննդով:

❖ Զեր կերակրացանկը դարձրեք բազմազան՝ ավելացնելով տարբեր համեմունքներ: Բուրավետ ճաշատեսակները հագեցվածության գացաղողություն են առաջացնում:

❖ Սնունդը տապակելիս քիչ յուղ օգտագործեք:

❖ Աղի փոխարեն կիրառեք սոյայի սոուս: Այն ոչ միայն աղիացնում է ուտելիքը, այլև ուտեստն ավելի համեղ է դարձնում:

❖ Ճաշն սկսեք բանջարեղենային նախուտեստներից և ամեն կտոր մսի հետ կերեք երեք անգամ ավելի շատ բանջարեղեն:

❖ Ալկոհոլը մեծացնում է ախտրժակը, ուստի խուսափեք ուտելուց առաջ 1 գավաք կոնյակ կամ որևէ այլ խնիքը խնելուց, քանի որ այն կստիպի ծեզ երկու անգամ ավելի շատ ուտել:

❖ Չափից ավելի մի' կերեք. այն նպաստում է ճարպակալմանը, խորացնում առողջության հետ կապված խնդիրները:

❖ Նեռուստացույց դիտելը, լրագիր ընթերցելը վատացնում են ախտրժակը և սննդի յուրացումը:

❖ Մի' մոռացեք գիշերային լիարժեք հանգստի մասին: Հայտնի է, որ անքնությունը, մի շարք տհաճություններից զատ, քաշի ավելացման պատճառ է հանդիսանում:

❖ Ղանձլամերը կարգավորում է նյութափոխանակությունը, կիրառվում է որպես նիհարեցնող միջոց:

❖ Ղանձլամերը խորհուրդ է տրվում ճարպակալման դեպքում. այն աստիճանաբար կարգավորում է մարմնի քաշը (ընդ որում, գեր մարդիկ նիհարում են, իսկ նիհարները ձեռք են բերում նորմալ քաշ):

## ԹԶԻ ԲՈՒԺԻՉ

### ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Թուզը մարդկությանը հայտնի հնագույն պտուղներից է: Այն շատ հյութալի է, թարմ վիճակում պարունակում է 20-25 % շաքարներ, իսկ չորացրած վիճակում՝ 75 %: Յարուսաւ է A և C վիտամիններով, երկաթով, կալցիումով, պեկտինային նյութերով, օրգանական միացություններով, հանքային աղերով: Շաքարներից գերակշռում են խաղողաշաքարը՝ գյուկոզան, պտղաշաքարը՝ ֆրուկտոզան, որոնք հեշտությամբ են մարսվում:

Թզից պատրաստում են մուրաբա, պովիլո, ջեմ կոմպոտ, չիր: Բարձրարժեք սննդամբերը լինելուց բացի, այն ունի նաև բուժիչ հատկություններ: Ամիրողովաթ գրում է, որ լավագույնն սպիտակ թուզն է, հետո՝ կարմիրը, ապա՝ սևը: Սպիտակ թուզը սնում է մարմինը, արագ է հալվում ստամոքսում, հագեցնում է ծարավը, օրգանիզմը մաքրում է ավելորդ նյութերից:

Չին բժշկարաններում նշված է, որ լավ հասած թուզը, որը պիտի ուտել մորու հետ, մաքրում է յարդը, փայծաղը, կուրծքը: Օգտակար է ընկնավորության, դիգենտերիայի, անենիայի, երիկամների, միզապարկի, ստամոքսի հիվանդությունների, փորկապության, կոկորդի ու կրծքի բռնվածության դեպքում: Չագի ժամանակ պետք է խմել թզենու տերևների եփուկ, կատարակտի դեպքում՝ տերևներից արտադրվող հյութը մեղրի հետ կարեցնել աչքերի մեջ, իսկ մաշկային հիվանդությունների ժամանակ կիրառել որպես քսուք:

Թզի չիրն օրգանիզմից հեռացնում է խոնավությունը: Գեղձախտով հիվանդներին խորհուրդ է տրվում չրի եփուկով ողողել կոկորդը: Չրից եփված շիլան ուտելով՝ օրգանիզմը կդիմակայի ցանկացած թույնի: Թոքերի բորբոքումից հետո առաջացած հազի դեպքում 2 հատ սպիտակ թզի չիրը 1 բաժակ տաք կաթով եռացնել: Խմել տաք վիճակում օրը երկու անգամ 1-ական բաժակ՝ ուտելուց հետո: Չի կարելի չափից ավելի չիր ուտել. այն բացասաբար է ազդում արյան վրա՝ փոխելով վերջինիս որակը:

## ԾԻՐԱՆԻ ԲՈՒԺԻՉ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



Ծիրանը հայկական պտուղ է: Պատմությունից հայտնի է, որ երբ հռոմեացիները մտան Հայաստան, Տիգրանի դեմ կռվելու, ծիրանը, որպես լավագույն ավար, իրենց հետ տարան Եվրոպա: Բարձրածաշակ Եվրոպացիները հիացած էին նորահայտ պտղի տեսքով, համով, հոտով՝ դեռևս չիմանալով, որ այն օժտված է նաև հրաշալի ու կենարար հատկություններով: Արաբները, ճաշակելով ծիրանը, այն անվանեցին «հայկական խնձոր»:

Գոյություն ունեն ծիրանի ավելի քան քսան տեսակներ: Ամիրդովլաթ Ամասիացին գրում է, որ լավագույն ծիրանը խոշորն ու դեղինն է:

Ծիրանը պարունակում է տարբեր տեսակի շաքարներ, վիտամիններ (A, B<sub>2</sub>, C, P), կալիում, նատրիում, մազգնեզիում, կալցիում, ֆոսֆոր, երկաք: Նրանից պատրաստված չոփ մեջ վեց անգամ ավելի շատ վիտամիններ կան, քան` բարձ ծիրանում: Չիրն օգտագործելուց առաջ խորհուրդ է տրվում նախապես լվանալ և ջրում թողնել այնքան, մինչև փափկի: Չիրն ստացված եփուկը (առանց շաքարավազի) բուժում է ստամոքսի ցավերը, հագեցնում ծարավը, օգնում է սուր ջերմներին:

Բժշկապետերն իրենց բժշկարաններում բազում հիշատակություններ են թողել ծիրանի բուժիչ հատկությունների մասին: Ամիրդովլաթը գրում է, որ ծիրաննենու տերևների եփուկն օգտակար է դիֆերիայի դեպքում: Պարզապես հարկավոր է դրանով ողողումներ կատարել:

Կոկորդացավի և հարբուխի ժամանակ պետք է ծիրաննենու տերևները եռացրած ջրում թրմել ու խմել: Տերևները նախապես

հավաքել, չորացնել ստվերոտ տեղում, որպեսզի արևի ճառագյթներից չկորցնեն բուժիչ հատկությունները: Չորանալուց հետո անհրաժեշտ է պահել մութ և չոր տեղում:

Ծիրանի կորիզը ևս ունի օգտակար ու բուժիչ հատկություններ: Ականջի ցավի ժամանակ անփոխարինելի դեղամիջոց է համարվում կորիզից ստացված յուղը (կորիզը չորացնել, ծեծել՝ հանելով յուղը), որը, ցավը վերացնելուց զատ, մաքրում է նաև ականջը՝ հստակեցնելով լսողությունը: Նրա սերմերն օգտագործում են նուշի փոխարեն, դրանք ճգնելով կաթ են ստանում:

Ծիրանը հրաշալի դեղամիջոց է սրտանոթային հիվանդությունների ժամանակ: Ինֆարկտի, ստենոկարդիայի դեպքում պետք է հավասար քանակությամբ իրար խառնել ծիրանի չիրը, չամիչը, ընկույզը, մեղրը և ամեն օր 2-3 ճ/գ ուտել այդ խառնուրդից:

Ծիրանը չափազանց օգտակար է անենիայի (սակավարյունություն) ժամանակ. այս արյան քաղաղության մեջ վերականգնում է հեմոգլոբինի քանակը:

Այս հրաշագործ միրզը կարգավորում է նաև աղիքների աշխատանքը, լավացնում է մարսողությունը, տեսողությունը, ունի հակակարծրացնող, անոթները լայնացնող, հանգստացնող, միզամուղ հատկություններ, օրգանիզմը մաքրում է թափոններից: Արդյունավետ է նաև նեֆրիտի ու վերին շնչառական ուղիների բորբոքումների դեպքում:

Ծիրանային մոնողիետան հրաշալի արդյունք է տալիս: Դրա համար պետք է 7-14 օր անընդմեջ սնվել միայն դրանով (օրական 300-1000 գ), ուրիշ ոչինչ ուտել չի կարելի: Ծիրանն օգտակար է և՛ թարմ, և՛ չորացրած, և՛ պահածոյացրած (կոմպոտ, մուրաբա, ջեմ, հյութ) վիճակում: Նրանից պատրաստում են նաև օդի, սախրտային այլ խմիչքներ:

Ըմբուշներ աստվածային այս պտուղը և միշտ առողջ եղեք:

